# «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ

# Ֆինանսական հաշվետվություններ
# 2025թ. համար

## Բովանդակություն

| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 8 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն | 9 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 10 |
| Դրամական հոսքերի մասին հաշվետվություն | 11 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 12 |

KPMG

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդին և բաժնետերերին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք*), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների: Մենք կատարել ենք նաև էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

| Հասույթի ճանաչում | |
|---|---|
| Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 23-ում: | |
| **Աուդիտի առանցքային հարց** | **Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր** |
| Բիլինգային համակարգում ձևավորված հասույթն էական գումար է կազմում, որը բաղկացած է մեծ ծավալով՝ անհատական հիմունքով ցածր արժեք ունեցող գործարքներից: Ընկերությունն օգտագործում է բիլինգային համակարգը հասույթը հաշվարկելու համար, հասույթի վերաբերյալ տվյալները բիլինգային համակարգից ոչ ավտոմատ կերպով փոխանցվում են հաշվապահական ծրագիր: Այդպիսով, Ընկերությունը հիմնվում է բիլինգային համակարգի կողմից մշակված տվյալների վրա:<br><br>Բացի այդ Ընկերությունը հասույթ է ստանում ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված ծառայությունների մատուցման մի շարք պայմանագրերից, որոնք կարող են ներառել մեկից ավելի կատարման պարտականություն:<br><br>Բիլինգային համակարգի բարդությունը՝ մեծ ծավալով ավտոմատացված գործարքների առկայությամբ, սակայն դեռևս ոչ ավտոմատ մշակման որոշակի մակարդակով, ՖՀՄՍ 15-ի կիրառման բարդությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ պայմանագրերի նկատմամբ՝ համակցված Ընկերության կողմից արդյունքներն առավել բարենպաստ կերպով ներկայացնելու նպատակով հասույթը միտումնավոր ավել ներկայացնելու միշտ առկա ներհատուկ ռիսկի հետ, հանգեցնում են նրան, որ հասույթի ճանաչման խնդրությունը դառնում է աուդիտորի ուշադրության ոլորտ և, հետևաբար, աուդիտի առանցքային հարց: | Աուդիտի առանցքային հարցի հետ կապված մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.<br><br>– Մեր ՏՏ մասնագետների աջակցությամբ գնահատել ենք հավելվածների հիմնական ներքին ավտոմատացված հսկողության մեխանիզմների և դրանց հետ կապված բիլինգային համակարգի ընդհանուր ՏՏ հսկողության մեխանիզմների կառուցվածքը և ներդրումը, ստուգել ենք դրանց գործառնական արդյունավետությունը:<br><br>– Գնահատել ենք բիլինգային համակարգի նկատմամբ կիրառվող հիմնական ներքին ոչ ավտոմատացված հսկողության մեխանիզմների կառուցվածքը և ներդրումը, ստուգել ենք դրանց գործառնական արդյունավետությունը:<br><br>– Իրականցրել ենք բիլինգային համակարգի հասույթի տվյալների համադրում հաշվապահական ծրագրի և ֆինանսական հաշվետվությունների տվյալների հետ:<br><br>– Համադրել ենք հասույթը՝ հաշվի առնելով համապատասխան դեբիտորական պարտքերի և ավանդների մնացորդների փոփոխության ազդեցությունը, բանկային վճարումների գրանցամատյանի և ուղղակիորեն բանկերից և վճարային համակարգերի օպերատորներից ստացված հաստատումների տվյալների հետ:<br><br>– Իրականացրել ենք վերլուծական ընթացակարգեր հասույթի հիմնական ուղղությունների հետ կապված՝ ձևավորելով կանխատեսումներ առանցքային ելակետային տվյալների (սակագներ, բաժանորդների թիվ, տրաֆիկի ծավալ) հիման վրա և համեմատելով դրանք հասույթի գրանցված գումարների հետ: Ստուգել ենք ելակետային տվյալների հուսալիությունը՝ թեստավորելով համապատասխան ավտոմատացված հսկողության մեխանիզմները և ընտրանքային կարգով ստուգելով ներքին և արտաքին հիմնավորող փաստաթղթերը: |

| | |
|---|---|
| | – Ստուգել ենք ընտրանքային կարգով բիլինգային համակարգում գրանցված՝ ոչ ավտոմատ կերպով կատարված ուղղումները՝ ստուգելով համապատասխան հիմնավորող ներքին փաստաթղթերը և գնահատելով ուղղումների տեղին լինելը ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն:<br>– Աուդիտի նկատմամբ մեր մոտեցման մեջ անկանխատեսելիության տարր ներառելու նպատակով՝ ընտրանքային կարգով անմիջականորեն կապվել ենք հաճախորդների հետ և համեմատել ենք նրանց սակագնային պլանները բիլինգի համակարգի տվյալների հետ:<br>– Ընտրանքային կարգով ստուգել ենք ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը և վերահաշվարկել ենք հասույթը՝ ՖՀՄՍ 15-ի պահանջների համաձայն:<br>– Գնահատել ենք նաև, արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են ՖՀՄՍ 15-ի պահանջները: |

## Այլ հանգամանք

Ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 2025թ. մայիսի 30-ի եզրակացությունում արտահայտել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

– որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

– ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

– գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի համապատասխան պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ իրավական ակտով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի գործընկերը, որի արդյունքում ներկայացվում է այս աուդիտորական եզրակացությունը՝

Իրինա Գևորգյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն, Ղեկավար գործընկեր

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
2 մայիսի 2026թ.

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
# 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 7 | 31,347,293 | 29,269,571 |
| Ներդրումային գույք | 8 | 6,097,112 | 6,097,112 |
| Ոչ նյութական ակտիվներ | 9 | 13,579,489 | 12,264,582 |
| Կանխավճարներ օգտագործման անվերապահ իրավունքի համար | 10 | 1,879,343 | 1,175,414 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 18 | 9,875,639 | 5,921,387 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար | 7 | 1,750,984 | 1,892,432 |
| Տրամադրված փոխառություններ | 11 | 16,568,547 | 19,629,859 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 29 | 822,823 | 1,360,417 |
| Պայմանագրի գծով ակտիվներ | | 44,807 | 58,084 |
| Ներդրումներ բաժնային գործիքներում | | 120,289 | 198,914 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **82,086,326** | **77,867,772** |
| Պաշարներ | 12 | 922,315 | 651,030 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 13 | 9,290,610 | 9,652,024 |
| Կանխավճարներ և պայմանագրի գծով ակտիվներ | 14 | 2,347,794 | 3,036,999 |
| Ստացվելիք հարկեր | | 75,096 | 430,308 |
| Ժամկետային ավանդ | | - | 673,914 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքներ | 15 | 9,134,776 | 7,905,458 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **21,770,591** | **22,349,733** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **103,856,917** | **100,217,505** |
| **Սեփական կապիտալ** | 16 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 22,837,709 | 22,837,709 |
| Էմիսիոն եկամուտ | | 4,240,000 | 4,240,000 |
| Չբաշխված շահույթ | | 13,264,229 | 12,194,787 |
| Պահուստային կապիտալ | | 3,425,656 | 3,425,656 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **43,767,594** | **42,698,152** |
| **Պարտավորություններ** | | | |
| Թողարկված պարտատոմսեր | 17 | 28,206,537 | 28,967,505 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 21 | 273,157 | 2,225,869 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 18 | 5,443,034 | 3,870,684 |
| Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստներ | 20 | 1,788,406 | 1,740,060 |
| Ստացված կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ | 22 | 2,431,051 | 1,758,067 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **38,142,185** | **38,562,185** |
| Թողարկված պարտատոմսեր | 17 | 100,914 | 184,547 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 18 | 2,650,802 | 2,039,264 |
| Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր | 21 | 13,215,279 | 10,675,835 |
| Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ | | 25,617 | 35,479 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | | 1,194,618 | 1,223,856 |
| Ստացված կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ | 22 | 4,292,692 | 4,263,868 |
| Վճարվելիք հարկեր | | 467,216 | 534,319 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **21,947,138** | **18,957,168** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **60,089,323** | **57,519,353** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **103,856,917** | **100,217,505** |



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2025թ. համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|---|
| Հասույթ բջջային կապի ծառայություններից | 23 | 16,973,015 | 16,733,163 |
| Հասույթ ֆիքսված կապի ծառայություններից | 23 | 12,867,915 | 13,400,945 |
| Հասույթ սարքավորումների վաճառքից | 23 | 2,807,217 | 2,701,055 |
| Այլ հասույթ | 23 | 2,074,729 | 702,497 |
| Հասույթ վարձակալությունից | | 1,127,457 | 1,510,985 |
| **Ընդամենը հասույթ** | | **35,850,333** | **35,048,645** |
| Մատուցված ծառայությունների ինքնարժեք | 24 | (23,277,222) | (21,906,182) |
| Վաճառված սարքավորումների ինքնարժեք | 24 | (2,661,460) | (2,239,631) |
| **Ընդամենը վաճառքի ինքնարժեք** | | **(25,938,682)** | **(24,145,813)** |
| **Համախառն շահույթ** | | **9,911,651** | **10,902,832** |
| Ֆինանսական ակտիվների (արժեզրկումից զուտ կորուստ)/արժեզրկման զուտ հակադարձում | | (174,909) | 511,588 |
| Այլ գործառնական եկամուտ | 25 | 3,668,517 | 519,148 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | 26 | (5,376,626) | (4,782,476) |
| Իրացման ծախսեր | 27 | (3,399,837) | (3,478,581) |
| Ներդրումային գույքի իրական արժեքի զուտ ճշգրտում | 8 | - | (138,650) |
| Այլ գործառնական ծախսեր | 28 | (703,401) | (826,319) |
| **Գործառնական շահույթ** | | **3,925,395** | **2,707,542** |
| Ֆինանսական եկամուտ | 29 | 1,734,495 | 2,385,014 |
| Ֆինանսական ծախսեր | 29 | (4,147,136) | (2,593,014) |
| Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերություններից | | 94,282 | (696,546) |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | | **1,607,036** | **1,802,996** |
| Շահութահարկի գծով ծախս | 30 | (537,594) | (378,951) |
| **Տարվա շահույթ** | | **1,069,442** | **1,424,045** |
| **Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | **1,069,442** | **1,424,045** |
| **Մեկ սովորական բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթ (ՀՀ դրամով՝ մեկ բաժնետոմսի դիմաց)** | 31 | **4.68** | **6.24** |

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

| Հայկ Եսայան<br>Գլխավոր տնօրեն | Կարեն Մնացականյան<br>Ֆինանսական տնօրեն | Տաթևիկ Գևորգյան<br>Գլխավոր հաշվապահ |
|---|---|---|



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2025թ. համար

| **հազ. դրամ** | **Կանոնադրա-կան կապիտալ** | **Էմիսիոն եկամուտ** | **Չբաշխված շահույթ** | **Պահուստային կապիտալ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|
| Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 22,837,709 | 4,240,000 | 10,770,742 | 3,425,656 | 41,274,107 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | |
| 2024թ. շահույթ | - | - | 1,424,045 | - | 1,424,045 |
| **Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **1,424,045** | **-** | **1,424,045** |
| **Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **22,837,709** | **4,240,000** | **12,194,787** | **3,425,656** | **42,698,152** |
| | | | | | |
| Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ | 22,837,709 | 4,240,000 | 12,194,787 | 3,425,656 | 42,698,152 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | |
| 2025թ. շահույթ | - | - | 1,069,442 | - | 1,069,442 |
| **Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **1,069,442** | **-** | **1,069,442** |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **22,837,709** | **4,240,000** | **13,264,229** | **3,425,656** | **43,767,594** |



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
# 2025թ. համար

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 37,146,595 | 36,637,874 |
| Դրամական մուտքեր վարձակալությունից | 1,409,252 | 1,583,782 |
| Դրամական մուտքեր այլ պաշարների վաճառքից | 1,362,858 | 319,252 |
| Ստացված տոկոսներ | 29,358 | 128,174 |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ | (18,224,545) | (14,812,459) |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (7,942,772) | (7,041,425) |
| Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | (4,654,169) | (4,224,105) |
| Վճարված տոկոսներ | (2,431,587) | (2,297,730) |
| Այլ գործառնական գործունեության համար վճարված դրամական միջոցներ | (100,207) | (61,073) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | **6,594,783** | **10,232,290** |
| | | |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (10,828,792) | (10,567,249) |
| Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից | 5,200,695 | 31,810 |
| Ներդրումներ սեփական կապիտալում | - | (200,000) |
| Տրամադրված փոխառությունների գծով ստացված մարումներ | 4,000,000 | - |
| Բանկային ավանդների գծով ստացված վճարումներ | 1,791,429 | 1,530,000 |
| Բանկային ավանդների ներդրում | (1,104,117) | (833,256) |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(940,785)** | **(10,038,695)** |
| | | |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Մուտքեր պարտատոմսերի թողարկումից | - | 28,884,072 |
| Մուտքեր բանկային վարկերից | - | 1,571,750 |
| Բանկային վարկերի մարում | - | (20,076,440) |
| Վարձակալության հիմնական մասի դիմաց վճարումներ | (4,380,346) | (3,650,350) |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(4,380,346)** | **6,729,032** |
| | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ փոփոխություն** | **1,273,652** | **6,922,627** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ | 7,905,458 | 989,762 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (44,334) | (6,931) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **9,134,776** | **7,905,458** |



Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 2025թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| 1. Հաշվետու ընկերություն | 13 |
| 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ | 14 |
| 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ | 14 |
| 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում | 15 |
| 5. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ | 17 |
| 6. Համադրելի տեղեկատվություն | 18 |
| 7. Հիմնական միջոցներ | 18 |
| 8. Ներդրումային գույք | 20 |
| 9. Ոչ նյութական ակտիվներ | 21 |
| 10. Կանխավճարներ օգտագործման անվերապահ իրավունքի (ՕԱԻ) համար | 22 |
| 11. Տրամադրված փոխառություններ | 22 |
| 12. Պաշարներ | 23 |
| 13. Առևտրային դեբիտորական պարտքեր | 24 |
| 14. Կանխավճարներ և պայմանագրի գծով ակտիվներ | 26 |
| 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 27 |
| 16. Կանոնադրական կապիտալ | 27 |
| 17. Թողարկված պարտատոմսեր | 28 |
| 18. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ | 29 |
| 19. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում | 31 |

| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| 20. Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստներ | 32 |
| 21. Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր | 33 |
| 22. Կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ | 33 |
| 23. Հասույթ | 34 |
| 24. Վաճառքի ինքնարժեք | 37 |
| 25. Այլ գործառնական եկամուտ | 37 |
| 26. Ընդհանուր և վարչական ծախսեր | 38 |
| 27. Իրացման ծախսեր | 38 |
| 28. Այլ գործառնական ծախսեր | 39 |
| 29. Ֆինանսական եկամուտ և ծախսեր | 39 |
| 30. Շահութահարկ | 40 |
| 31. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ | 42 |
| 32. Հանձնառություններ և պայմանական դեպքեր | 43 |
| 33. Ֆինանսական ռիսկերի կառավարում | 43 |
| 34. Կապիտալի կառավարում | 47 |
| 35. Իրական արժեքի բացահայտումներ | 48 |
| 36. Կապակցված կողմերի հետ գործարքներ և մնացորդներ | 50 |

# 1. Հաշվետու ընկերություն

## (ա) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Ընկերությունը հիմնադրվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում, այն բաց բաժնետիրական ընկերություն է՝ բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ, և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերությունն ի սկզբանե հիմնադրվել է 1995թ-ին որպես «ԱրմենՏել» պետական գերակշռող մասնակցությամբ ձեռնարկություն՝ կառավարության որոշմամբ լիազորվելով հանդես գալու որպես Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ինտեգրված ծառայությունների առաջին և միակ մատակարարը: 2006թ-ին «ԱրմենՏել»-ը դարձավ միջազգային հեռահաղորդակցության ընկերության՝ «ՎԵՈՆ» ՍՊԸ-ի (նախկին «ՎիմպելԿոմ» ՍՊԸ, որը 2017թ-ին վերանվանվել էր «ՎԵՈՆ») դուստր ընկերությունը՝ հրաժարվելով ծառայությունների մատուցման օրենքով սահմանված իր մենաշնորհային իրավունքներից և մինչև 2008թ. լիովին ինտեգրվեց «Բիլայն» ապրանքանիշին՝ գործունեությունը շարունակելով որպես «Բիլայն Արմենիա»: 2020թ-ին «ՎԵՈՆ»-ը օտարեց «Բիլայն Արմենիա»-ն՝ իր ամբողջ մասնաբաժինը վաճառելով «Թիմ» ՍՊԸ-ին: 2020թ. հոկտեմբերի 28-ին Ընկերության 100% բաժնետոմսերը վաճառվեցին Հայաստանի Հանրապետությունում գրանցված «Թիմ» ՍՊԸ-ին: 2020թ. նոյեմբերի 16-ին «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն վերանվանվեց «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի: 2021թ. դեկտեմբերի 30-ին «Թիմ» ՍՊԸ-ն վերակազմակերպվեց «Թիմ» ՓԲԸ-ի: 2023թ. ապրիլի 11-ին Ընկերությունը ՓԲԸ-ից վերակազմավորվեց ԲԲԸ-ի: 2023թ. հունիսի 2-ին Ընկերությունը սկսեց բաժնետոմսերի առաջնային հրապարակային առաջարկի (IPO) գործընթացը Հայաստանի ֆոնդային բորսայում և 2023թ. հունիսի 7-ից 2023թ. հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում թողարկեց 40 միլիոն բաժնետոմս՝ 8 միլիարդ 240 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական և վերջնական մայր ընկերությունն է «Թիմ» ՓԲԸ-ն, և Ընկերության վերջնական հսկողությունն իրականացնում են Հայկ և Ալեքսանդր Եսայան եղբայրները:

***Հիմնական գործունեությունը***. 2022թ. մայիսից Ընկերությունը գործում է «Թիմ» ապրանքանիշի ներքո: Ընկերությունը հասույթը ստանում է բջջային և ֆիքսված կապի մի շարք տեխնոլոգիաների միջոցով հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումից և հաճախորդներին սարքավորումների վաճառքից:

Ընկերությունը կառավարվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Տնօրենների խորհրդի և Ընկերության գործադիր մարմնի կողմից՝ ի դեմս Գործադիր տնօրենի:

***Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը***. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0014, Ազատության պողոտա 24/1: Ընկերության գործունեության հիմնական վայրը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

## (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Համապատասխանաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանց պահանջները կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա լինել հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական բնույթ կրող ռազմական հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել են անորոշությունը գործարար միջավայրում: 2025թ. օգոստոսին

Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական գործունեության վրա մնում են անորոշ:

Միևնույն ժամանակ, 2026թ. ընթացքում աշխարհաքաղաքական լարվածությունը զգալիորեն սրվել է Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններից, այդ թվում՝ Իրանի մասնակցությամբ զարգացումներից հետո: Այդ իրադարձությունները մեծացրել են անորոշությունը համաշխարհային ֆինանսական շուկաներում, խաթարել են մատակարարման շղթաները և նպաստել են էներգակիրների գների տատանողականությանը: Ընկերությունը շարունակում է գնահատել այդ զարգացումների հնարավոր ազդեցությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

**(ա) Համապատասխանության հավաստում**

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն:

**(բ) Անընդհատության հիմունք**

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվություններն անընդհատության հիմունքով: Այդ դատողությունը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործունեության շահութաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընթացիկ պարտավորությունները փոքր-ինչ գերազանցել են ընթացիկ ակտիվները 176,547 հազար դրամով: Այնուամենայնիվ, Ընկերությունը զգալի դրամական հոսքեր է ստացել գործառնական գործունեությունից և 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ շահույթը կազմել է 1,069,442 հազար դրամ: Ընկերությունը կանոնավոր կերպով բանակցություններ է վարում մատակարարների հետ՝ ավելի բարենպաստ վճարման պայմաններ ստանալու համար: Այս հանգամանքները, ի թիվս այլ գործոնների, թույլ են տալիս ղեկավարությանը համարել, որ տեսանելի ապագայում Ընկերությունը կշարունակի իր գործունեությունն անընդհատության հիմունքով և կկատարի իր ֆինանսական պարտավորությունները:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

# 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ընկերությունը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա հաջորդ ֆինանսական տարում: Գնահատումները և դատողությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների, այդ թվում՝ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք համարվում են ողջամիտ առկա հանգամանքներում: Բացի գնահատումներից, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում:

Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, և գնահատումները, որոնք կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների հաջորդ ֆինանսական տարում, հետևյալն են.

***Տրամադրված փոխառությունների իրական արժեք.*** Ընկերությունը փոխառություններ է տրամադրել իր մայր ընկերությանը: Փոխառությունների մարումը առավելապես կախված է Ընկերությունից ստացվելիք ապագա շահաբաժիններից: Հետևաբար, ղեկավարության գնահատմամբ փոխառությունները չեն համապատասխանում միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշին, ինչպես պահանջվում է ՖՀՄՍ 9-ով, և դասակարգում է փոխառությունները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Փոխառությունները հաշվառվում են իրական արժեքով (3-րդ մակարդակ) հաշվետու ամսաթվերի դրությամբ: Փոխառությունների իրական արժեքը որոշվում է ապագա մուտքերի հիման վրա, որոնք զեղչվում են գնահատված շուկայական դրույքով, որը ստացվում է կիրառելով Ընկերության գնահատված վարկային սփրեդը հայկական կազմակերպությունների համար կիրառելի ոչ ռիսկային դրույքի նկատմամբ՝ համապատասխան արժույթով (Ծանոթագրություն 11): Իրական արժեքը զգայուն է զեղչման դրույքի փոփոխությունների նկատմամբ: Եթե գնահատված զեղչման դրույքը 1%-ով բարձր լիներ, փոխառության իրական արժեքը ցածր կլիներ 425,707 հազար դրամով (2024թ-ին՝ 508,278 հազար դրամով):

***Ներդրումային գույքի գնահատում.*** ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով (3-րդ մակարդակ) գնահատող ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պատրաստված հաշվետվությունների հիման վրա: Այդ գույքի գնահատումը հիմնականում հիմնված է եղել զեղչված դրամական հոսքերի կանխատեսումների վրա, որոնք ձևավորվել են ապագա դրամական հոսքերի հուսալի գնահատումների հիման վրա՝ հիմնավորված գործող վարձակալության և այլ պայմանագրերի պայմաններով և այլ արտաքին ապացույցներով, որոնցից են նույն վայրում և վիճակում գտնվող նմանատիպ գույքի ընթացիկ շուկայական վարձավճարները, և օգտագործելով զեղչման դրույքները, որոնք արտացոլում են դրամական հոսքերի գումարների և ժամկետների անորոշության ընթացիկ շուկայական գնահատումները:

Ղեկավարությունը վերանայել է գնահատողների կողմից կիրառված ենթադրությունները, որոնք հիմք են հանդիսացել գնահատման ընթացքում օգտագործված զեղչված դրամական հոսքերի մոդելների համար, և հաստատել է, որ գործոնները, օրինակ՝ կիրառված զեղչման դրույքը, որոշվել են պատշաճ կերպով՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանի վերջում առկա շուկայական պայմանները: Չնայած վերոնշյալին, ղեկավարությունը գտնում է, որ ներդրումային գույքի գնահատումը ներկայումս առավելապես կախված է դատողություններից և մեծ է հավանականությունը, որ վաճառքից ստացվող փաստացի հասույթը կարող է տարբերվել հաշվեկշռային արժեքից:

Իրական արժեքի գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունները վերաբերում են շուկայական վարձավճարներին, զբաղվածության մակարդակին, սպասարկման պահանջներին և համապատասխան զեղչման դրույքներին: Այդ գնահատումները պարբերաբար համեմատվում են շուկայի եկամտաբերության փաստացի տվյալների, Ընկերության կողմից իրականացված փաստացի գործարքների և շուկայի հրապարակված տվյալների հետ հետ:

***Վարձակալության ժամկետ.*** Ընկերությունը վարձակալության պայմանագրերը հիմնականում վերաբերում են տարբեր տարածքների (օրինակ՝ հողատարածքների, տանիքների վրա տարածքների, բջջային կապի աշտարակների տարածքների և այլն) վարձակալությանը, որոնք օգտագործվում են Ընկերության հեռահաղորդակցության սարքավորումների տեղադրման համար, ինչպես նաև մասնաճյուղերի տարածքների և գլխամասային գրասենյակի շենքի վարձակալությանը: Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և համապատասխան վարձակալական պարտավորություններ այն պայմանագրերի գծով, որոնք երկարաժամկետ են կամ ըստ պայմանագրի կամ ըստ էության: Քանի որ ղեկավարությունը կիրառում է դատողություն վարձակալության փաստացի ժամկետը որոշելիս, ՖՀՄՍ 16-ի նպատակներով օգտագործվող վարձակալության ժամկետները կարող են տարբերվել պայմանագրով սահմանված վարձակալության նվազագույն ժամկետներից: Տարբերություններն ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

| | **Պայմանագրով նախատեսված վարձակալության նվազագույն սկզբնական ժամկետ** | **ՖՀՄՍ 16-ի նպատակներով օգտագործվող վարձակալության գնահատված ժամկետ՝ անցման պահից** |
|---|---|---|
| Տարածքի վարձակալություն | 1-10 տարի | 7 տարի |
| Մասնաճյուղերի տարածքներ | 1-5 տարի | 3 տարի |
| Սարքավորումներ | 1-5 տարի | Պայմանագրով նախատեսված ժամկետ |
| Գլխամասային գրասենյակ | 1-3 տարի | 5 տարի |

Վարձակալության գծով պարտավորությունները չափելիս Ընկերությունը վարձավճարները զեղչում է՝ կիրառելով վարձակալության ճանաչման ամսաթվին գործող լրացուցիչ փոխառության դրույքը: 2025թ-ին և 2024թ-ին կիրառված միջին կշռված դրույքը (ՀՀ դրամով) կազմում էր մոտավորապես 12%:

***Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ.*** հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են Ծանոթագրություն 7-ում: Ղեկավարությունը վերանայում է օգտակար ծառայության ժամկետները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտում է: Օգտակար ծառայության ժամկետների փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվություններում գրանցված ճանաչված մաշվածության ծախսի վրա:

***Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստի չափը որոշելու համար կիրառված ենթադրություններ.*** Ընկերությունն ունի սարքավորումներն ապամոնտաժելու և շահագործումից հանելուց հետո տեղանքը վերականգնելու իրավական և պայմանագրային պարտականություն: Պարտականության կատարման համար անհրաժեշտ գնահատված չզեղչված դրամական հոսքերի ընդհանուր գումարը, որը գնահատվել է Ընկերության տեխնիկական թիմի կողմից նախկինում իրականացված ապամոնտաժումների վերաբերյալ տեղեկատվության և ակնկալվող ծախսերի հիման վրա, կազմում է 5,062,690 հազար դրամ (2024թ-ին՝ 5,468,671 հազար դրամ)՝ հաշվի առնելով Հայաստանի համար կանխատեսվող 3% միջին գնաճի ազդեցությունը (2024թ-ին՝ 4%): 12 տարվա (2024թ-ին՝ 13 տարվա) ընթացքում իրականացվելիք տեղանքի վերականգնման ծախսերը զեղչելու համար կիրառվել է տարեկան 8.7% (2024թ-ին՝ 9.9%) զեղչման դրույք: Պահուստի ձևավորման ժամկետը սահմանվել է՝ հիմք ընդունելով լիցենզիայի գործողության ժամկետը: Զեղչման դրույքն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ պետական պարտատոմսերի նկատմամբ կիրառվող դրույքը:

***Սեգմենտների վերաբերյալ հաշվետվություններ***. Ընկերության հիմնական գործունեությունը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է բջջային և ֆիքսված կապի մի շարք տեխնոլոգիաների միջոցով: Այլ գործունեությունը ներառում է սարքավորումների վաճառքը հաճախորդներին և այլ գործունեությունը և անբաժանելիորեն կապված են Ընկերության հիմնական գործունեության հետ:

Ընկերության Վարչությունը («Ղեկավարություն») գլխավոր գործառնական որոշում կայացնողն է: Ղեկավարությունը գնահատում է ֆինանսական գործունեության արդյունքները՝ հիմնվելով ամբողջ Ընկերության գործունեության հիմնական ցուցանիշների վրա: Ընկերության ղեկավարությունը կանոնավոր կերպով վերանայում է ամբողջ Ընկերության գործառնական արդյունքները՝ հիմնվելով

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական տեղեկատվության վրա, կայացնում է որոշումներ գործունեությանը միջոցների հատկացման վերաբերյալ և գնահատում է ֆինանսական գործունեության արդյունքները: Բացի այդ, գործառնությունների ղեկավարների աշխատանքի վերահսկման և գնահատման գործընթացն իրականացվում է Ընկերության մակարդակով: Նրանց վարձատրությունը կախված է Ընկերության գործունեության հիմնական ցուցանիշների ապահովումից:

Արդյունքում Ընկերության ղեկավարությունը Ընկերությունը դիտարկում է որպես մեկ գործառնական սեգմենտ:

## 5. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2025թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2025թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը ժամկետից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

**(ա) ՖՀՄՍ 18 *«Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»***

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվում:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից մեկ ծանոթագրությունում:
- Տրամադրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ, բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Ընկերությունը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին հաշվետվության, դրամական հոսքերի մասին հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Ընկերությունը նաև գնահատում է ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա, այդ թվում՝ այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

**(բ) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ**

Ստորև ներկայացված նոր և փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Բնական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրեր (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

# 6. Համադրելի տեղեկատվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ճշգրտել է 1,743,099 հազար դրամ գումարով պայմանագրային պարտավորությունների դասակարգումը, որոնք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացվել էին որպես ընթացիկ պարտավորություններ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ճշգրտել է տրամադրված փոխառությունների դասակարգումը՝ ներկայացնելով դրանք իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասում՝ ամորտիզացված արժեքով չափվող դասի փոխարեն: Ճշգրտումը չի հանգեցրել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված փոխառությունների մնացորդի կամ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ շահույթի փոփոխությանը: Այնուամենայնիվ, փոփոխության արդյունքում նախորդ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը ներկայացվել է որպես իրական արժեքի փոփոխություն, կատարվել է տոկոսային եկամտի գծով ուղղում և արտարժույթի փոխարժեքի գծով ճշգրտում (իրական արժեքի փոփոխությունը ավելացցել է 557,247 հազար դրամով, ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստն ավելացել է 323,241 հազար դրամով, տոկոսային եկամուտը նվազել է 127,863 հազար դրամով և փոխարժեքային տարբերությունների գծով կորուստն ավելացել է 752,625 հազար դրամով):

Բացի այդ, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունների համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է՝ որոշ տողերի միավորված ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

# 7. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման գծով պահուստը՝ անհրաժեշտության դեպքում: Հիմնական միջոցները ներառում են հետագայում որպես հիմնական միջոց օգտագործման նպատակով կառուցվող ակտիվները:

***Մաշվածություն***. հողի և անավարտ շինարարության գծով մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մնացորդային արժեքին օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

| | **Օգտակար ծառայության ժամկետը՝ տարիներով** |
|---|---:|
| − Շենքեր և շինություններ | 20 |
| − Փոխանցող հարմարանքներ | 20 |
| − Հիմնական միջոցներ | 6-10 |
| − Տրանսպորտային միջոցներ | 5 |
| − Տնտեսական գույք | 10 |
| − Վարձակալված գույքի բարելավումներ | Վարձակալության ժամկետ |
| − Այլ | 6-10 |

| հազ. դրամ | Հող | Շենքեր և շինություններ | Փոխանցող հարմարանք-ներ | Հիմնական միջոցներ | Տրանս-պորտային միջոցներ | Տնտեսական գույք | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված գույքի բարելավումներ | Անավարտ շինարա-րություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | | | | | | |
| Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 512,674 | 15,087,165 | 48,671,814 | 93,412,556 | 2,184,163 | 2,858,717 | 20,349 | 6,424,269 | 8,040,630 | 177,212,337 |
| Ավելացումներ | 65,058 | 359,096 | 1,635,004 | 1,337,721 | 96,597 | 116,448 | 42 | 22,250 | 4,688,176 | 8,320,392 |
| Օտարումներ | - | (643) | (601,210) | (2,735,281) | (232,100) | (206,722) | - | (20,747) | (224,776) | (4,021,479) |
| Տեղափոխումներ | - | 280,128 | 1,928,262 | 2,706,840 | - | 48 | - | 15,057 | (4,930,335) | - |
| **Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **577,732** | **15,725,746** | **51,633,870** | **94,721,836** | **2,048,660** | **2,768,491** | **20,391** | **6,440,829** | **7,573,695** | **181,511,250** |
| Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ | 577,732 | 15,725,746 | 51,633,870 | 94,721,836 | 2,048,660 | 2,768,491 | 20,391 | 6,440,829 | 7,573,695 | 181,511,250 |
| Ավելացումներ | 145,552 | 542,948 | 1,659,268 | 1,424,295 | 187,726 | 196,432 | 54 | 580,137 | 2,793,891 | 7,530,303 |
| Օտարումներ | (85,292) | (1,271,372) | (1,340,784) | (3,560,473) | (76,025) | (137,173) | (3,118) | (162,072) | (709,307) | (7,345,616) |
| Տեղափոխումներ | 551 | 240,940 | 912,168 | 1,478,280 | - | 2,767 | - | 25,636 | (2,660,342) | - |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **638,543** | **15,238,262** | **52,864,522** | **94,063,938** | **2,160,361** | **2,830,517** | **17,327** | **6,884,530** | **6,997,937** | **181,695,937** |
| ***Մաշվածություն*** | | | | | | | | | | |
| Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | - | 12,975,424 | 42,765,564 | 83,967,116 | 1,731,487 | 1,992,249 | 20,349 | 5,354,609 | 2,386,071 | 151,192,869 |
| Տարվա մաշվածություն | - | 295,581 | 1,162,655 | 2,613,192 | 156,610 | 190,901 | 4 | 247,222 | - | 4,666,165 |
| Արժեզրկման հակադարձում | - | (114) | - | (360,144) | (263) | (864) | - | - | (13,408) | (374,793) |
| Օտարումներ | - | (529) | (579,119) | (2,244,436) | (229,059) | (168,672) | - | (20,747) | - | (3,242,562) |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **-** | **13,270,362** | **43,349,100** | **83,975,728** | **1,658,775** | **2,013,614** | **20,353** | **5,581,084** | **2,372,663** | **152,241,679** |
| Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ | - | 13,270,362 | 43,349,100 | 83,975,728 | 1,658,775 | 2,013,614 | 20,353 | 5,581,084 | 2,372,663 | 152,241,679 |
| Տարվա մաշվածություն | - | 390,154 | 1,277,717 | 1,697,575 | 159,977 | 171,318 | 9 | 254,659 | - | 3,951,409 |
| Արժեզրկումից կորուստ/ (արժեզրկման հակադարձում) | - | (20,894) | (25,402) | (113,481) | - | (5,464) | - | - | 262,925 | 97,684 |
| Օտարումներ | - | (1,206,093) | (1,295,184) | (3,141,852) | (38,269) | (104,614) | (3,118) | (152,998) | - | (5,942,128) |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **-** | **12,433,529** | **43,306,231** | **82,417,970** | **1,780,483** | **2,074,854** | **17,244** | **5,682,745** | **2,635,588** | **150,348,644** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | | | | | | |
| **2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **512,674** | **2,111,741** | **5,906,250** | **9,445,440** | **452,676** | **866,468** | **-** | **1,069,660** | **5,654,559** | **26,019,468** |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **577,732** | **2,455,384** | **8,284,770** | **10,746,108** | **389,885** | **754,877** | **38** | **859,745** | **5,201,032** | **29,269,571** |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **638,543** | **2,804,733** | **9,558,291** | **11,645,968** | **379,878** | **755,663** | **83** | **1,201,785** | **4,362,349** | **31,347,293** |

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 3,951,409 հազար դրամ գումարով ընդհանուր մաշվածության ծախսից (2024թ-ին՝ 4,666,165 հազար դրամ) 3,855,601 հազար դրամը (2024թ-ին՝ 4,504,760 հազար դրամ) ներառվել է մատուցված ծառայությունների ինքնարժեքում (Ծանոթագրություն 24) և 95,808 հազար դրամ մաշվածության ծախսը (2024թ-ին՝ 141,891 հազար դրամ)՝ ընդհանուր և վարչական ծախսերում (Ծանոթագրություն 26):

Անավարտ շինարարությունը բաղկացած է հեռահաղորդակցության և այլ սարքավորումների գծով կապիտալ ծախսումներից: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների համար կանխավճարները, որոնք հիմնականում վերաբերում են հեռահաղորդակցության սարքավորումների ձեռքբերմանը և շինարարական աշխատանքներին, կազմում են 1,750,984 հազար դրամ (2024թ-ին՝ 1,892,432 հազար դրամ): Տարվա ընթացքում օգտագործվել են էական մնացորդները և փոխանցվել են նոր կանխավճարներ նոր նախագծերի համար:

# 8. Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական արժեքով, ներառյալ գործարքի գծով ծախսումները, և հետագայում վերաչափվում է իրական արժեքով, որը թարմացվում է արտացոլելու համար շուկայական պայմանները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Ընկերության ներդրումային գույքի շուկայական արժեքը որոշվում է ճանաչված և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անկախ գնահատողների հաշվետվությունների հիման վրա, ովքեր ունեն նույն վայրում գտնվող և նույն դասի գույքի վերջերս իրականացված գնահատման փորձ:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| **Ներդրումային գույք՝ իրական արժեքով հունվարի 1-ի դրությամբ** | **6,097,112** | **6,205,118** |
| Հետագա բարելավումների գծով ծախսումներ | - | 30,644 |
| Իրական արժեքի փոփոխությունից զուտ (կորուստ)/օգուտ | - | (138,650) |
| **Ներդրումային գույք՝ իրական արժեքով դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **6,097,112** | **6,097,112** |

Ներդրումային գույքը ներառում է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ազատության պողոտա 24/1 հասցեով գտնվող շենքը: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ղեկավարությունը փոխել էր շենքի օգտագործման հետ կապված իր մտադրությունը և սկսել էր այն վարձակալությամբ հանձնել մի քանի վարձակալների:

Ներդրումային գույքը գնահատվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբերի 31-ին իրական արժեքով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողի կողմից, ով ունի Հայաստանում նմանատիպ գույքի գնահատման արդիական փորձ: Իրական արժեքի չափման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 35-ում:

Այն դեպքերում, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ներդրումային գույքի գործառնական վարձակալության գծով ստացվելիք ապագա նվազագույն վարձավճարները հետևյալն են.

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| 1 տարի | 1,012,697 | 1,401,781 |
| 2 տարի | 647,655 | 1,401,781 |
| 3 տարի | 291,511 | - |
| 4 տարի | 127,051 | - |
| **Ընդամենը գործառնական վարձակալության գծով ստացվելիք չզեղչված վարձավճարներ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,078,914** | **2,803,562** |

2025թ-ին ներդրումային գույքի վարձակալությունից ստացված եկամուտը կազմել է 1,112,457 հազար դրամ (2024թ-ին՝ 1,510,985 հազար դրամ):

# 9. Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության ոչ նյութական ակտիվներն ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը և լիցենզիաները:

Ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային մեթոդով՝ օգտակար ծառայության ժամկետի ընթացքում.

| | **Օգտակար ծառայության ժամկետը՝ տարիներով** |
|---|---|
| − Համակարգչային ծրագրեր | 4 - 12 |
| − Լիցենզիաներ | Լիցենզիայի ժամկետը, բայց ոչ ավել քան 12 |
| − Այլ ոչ նյութական ակտիվներ | 4 - 9.5 |

| **հազ. դրամ** | **Համակարգչային ծրագրեր** | **Լիցենզիաներ** | **Այլ ոչ նյութական ակտիվներ** | **Մշակման փուլում գտնվող ոչ նյութական ակտիվներ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | |
| Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 12,151,237 | 19,253,834 | 1,331,095 | 431,760 | 33,167,926 |
| Ավելացումներ | 892,000 | 5,724,976 | 185,355 | 194,585 | 6,996,916 |
| Օտարումներ | (53,873) | (423,133) | - | - | (477,006) |
| Տեղափոխումներ | 562,683 | 63,662 | - | (626,345) | - |
| **Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **13,552,047** | **24,619,339** | **1,516,450** | **-** | **39,687,836** |
| Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ | 13,552,047 | 24,619,339 | 1,516,450 | - | 39,687,836 |
| Ավելացումներ | 1,102,293 | 2,008,107 | 12,083 | - | 3,122,483 |
| Օտարումներ | (2,387,674) | (4,678,606) | - | - | (7,066,280) |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **12,266,666** | **21,948,840** | **1,528,533** | **-** | **35,744,039** |
| ***Ամորտիզացիա*** | | | | | |
| Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 10,938,199 | 15,274,722 | 611,430 | - | 26,824,351 |
| Տարվա ամորտիզացիա | 294,059 | 639,496 | 126,185 | - | 1,059,740 |
| Օտարումներ | (47,321) | (413,516) | - | - | (460,837) |
| **Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **11,184,937** | **15,500,702** | **737,615** | **-** | **27,423,254** |
| Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ | 11,184,937 | 15,500,702 | 737,615 | - | 27,423,254 |
| Տարվա ամորտիզացիա | 400,532 | 1,228,707 | 144,469 | - | 1,773,708 |
| Օտարումներ | (2,365,418) | (4,666,994) | - | - | (7,032,412) |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **9,220,051** | **12,062,415** | **882,084** | **-** | **22,164,550** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | |
| **2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **1,213,038** | **3,979,112** | **719,665** | **431,760** | **6,343,575** |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,367,110** | **9,118,637** | **778,835** | **-** | **12,264,582** |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **3,046,615** | **9,886,425** | **646,449** | **-** | **13,579,489** |

Լիցենզիաները ներառում են հիմնականում GSM լիցենզիաները, որոշակի հաճախականություններին միանալու լիցենզիաները և այլն:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 1,773,708 հազար դրամ գումարով ընդհանուր ամորտիզացիայի ծախսից (2024թ-ին՝ 1,059,740 հազար դրամ) 1,773,708 հազար դրամը (2024թ-ին՝ 1,059,657 հազար դրամ) ներառվել է մատուցված ծառայությունների ինքնարժեքում (Ծանոթագրություն 24):

# 10. Կանխավճարներ օգտագործման անվերապահ իրավունքի (ՕԱԻ) համար

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ի դրությամբ | 1,175,414 | 352,888 |
| Ավելացումներ | 1,370,387 | 1,095,244 |
| Կանխավճարներ, որոնք ապաճանաչվել են համապատասխան ՕԱԻ ծառայությունները ստանալիս | (217,133) | (272,718) |
| **Հաշվեկշռային արժեքը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,328,668** | **1,175,414** |

ՕԱԻ պայմանագրերի շրջանակում Ընկերության կողմից կատարված կանխավճարները հանդիսանում են որոշակի հաղորդունակության համար կատարված կանխավճարներ: Ընկերության մասնաբաժինն իրենից չի ներկայացնում ցանցի կամ դրա որևէ բաղադրիչի ըստ էության ամբողջ հաղորդունակությունը: Ընկերությունը չի ստանում նշված ցանցային ակտիվներն օգտագործելու իրավունք, փոխարենը, այն ստանում է պլանավորված հաղորդունակության որոշակի մասնաբաժնից օգտվելու իրավունք: Ընկերությունը ճանաչում է կանխավճարները վճարման պահին և ամորտիզացնում է դրանք վաճառքի ինքնարժեքի միջոցով՝ համապատասխան ՕԱԻ ծառայությունները ստանալիս: Պայմանագրերը կնքվում են 3 և 15 տարի ժամկետով:

# 11. Տրամադրված փոխառություններ

Տրամադրված փոխառությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Իրական արժեքի փոփոխությունից օգուտը և կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Փոխառությունները ենթակա են մարման 2026-2029թթ.՝ տարեկան 10.77% պայմանագրային տոկոսադրույքով:

Ընկերության տրամադրված փոխառություններն արտահայտված են հետևյալ արժույթներով.

| **հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2025թ.** | **31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---|---|
| Տրամադրված փոխառություններ՝ | | |
| − ԱՄՆ դոլարով | 15,756,670 | 18,807,896 |
| − ՀՀ դրամով | 811,877 | 821,963 |
| | **16,568,547** | **19,629,859** |

Ստորև բերված աղյուսակում ներկայացնում է Ընկերության կողմից տրամադրված փոխառությունների շարժը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| | **Վարկերի համախառն գումար** | **Վարկերի համախառն գումար** |
| **Տրամադրված փոխառությունները հունվարի 1-ի դրությամբ** | 19,629,859 | 17,960,531 |
| ***Դրամական հոսքեր*** | | |
| Մայր գումարի մարում | (4,000,000)* | - |
| ***Ոչ դրամական փոփոխություններ*** | | |
| Իրական արժեքի փոփոխություն | 149,238 | 486,184 |
| Հաշվեգրված տոկոսներ | 1,542,467 | 1,521,318 |
| Արտարժույթի փոխարժեքի գծով ճշգրտումներ | (753,017) | (338,174) |
| **Տրամադրված փոխառությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **16,568,547** | **19,629,859** |

* Գումարը վերադարձվել է փոխառուին հաշվետու ամսաթվից հետո:

## 12. Պաշարներ

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Նյութեր և պահեստամասեր | 712,265 | 742,888 |
| Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ | 718,000 | 483,853 |
| Վառելիք | 82,242 | 69,222 |
| Քարտեր | 40,384 | 20,374 |
| Այլ | 76,288 | 83,837 |
| | **1,629,179** | **1,400,174** |
| Պաշարների արժեքի նվազեցում մինչև իրացման զուտ արժեք | (706,864) | (749,144) |
| **Ընդամենը պաշարներ** | **922,315** | **651,030** |

# 13. Առևտրային դեբիտորական պարտքեր

Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր՝ բաժանորդներ | 7,096,133 | 6,528,945 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր՝ ռոումինգ | 1,079,730 | 742,494 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր՝ միջցանցային միացում | 442,330 | 606,131 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր՝ վերավաճառք | 115,703 | 202,944 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր՝ այլ առևտուր | 2,451,389 | 3,465,964 |
| **Ընդամենը առևտրային դեբիտորական պարտքեր մինչև պարտքային կորստի պահուստը** | **11,185,285** | **11,546,478** |
| Հանած՝ պարտքային կորստի պահուստը | (1,894,675) | (1,894,454) |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային դեբիտորական պարտքերի կազմում** | **9,290,610** | **9,652,024** |

Առևտրային դեբիտորական պարտքերի կազմում ներառված են հաճախորդներից մեկին մատուցված ինտերնետ տրաֆիկի ծառայությունների գծով ընդհանուր 2,898,227 հազար դրամ գումարով դեբիտորական պարտքերը (2024թ-ին՝ 3,064,429 հազար դրամ) և 3,419,854 հազար դրամ ընդհանուր գումարով մայր ընկերության դեբիտորական պարտքերը (2024թ-ին՝ 3,408,644 հազար դրամ):

***Ակնկալվող պարտքային կորուստներ (ԱՊԿ).*** Ընկերությունն ապագայամետ հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները: Ըկերությունը չափում է ակնկալվող պարտքային կորուստները և ճանաչում է զուտ կորուստ ֆինանսական ակտիվների արժեզրկումից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների չափումն արտացոլում է՝ (i) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է գնահատելով հնարավոր արդյունքների տիրույթը, (ii) փողի ժամանակային արժեքը և (iii) անցյալ դեպքերի, ընթացիկ պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների վերաբերյալ ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է հաշվետու ամսաթվի դրությամբ առանց անհարկի ծախսումների և ջանքերի:

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով պարտքային ռիսկի ընդհանուր բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

Ընկերությունը կիրառում է պարզեցված մոտեցում (պահուստավորման մատրից) հաշվարկելու համար ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները խմբային հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի, այդ թվում՝ այն դեբիտորական պարտքերի գծով, որոնց համար հաշիվ չի ներկայացվել: Պահուստավորման մատրիցը հիմնված է առևտրային դեբիտորական պարտքերի ամբողջ ժամկետի ընթացքում պարտքային կորուստների նախկին փորձի վրա: Ապագայամետ գնահատումները ներառում են մակրոտնտեսական գործոնները, այդ թվում՝ ՀՆԱ-ն և գործազրկության մակարդակը Հայաստանում: Ընկերությունը չի կիրառում ապագայամետ տեղեկատվության մասով ճշգրտումներ պարտազանցման դրույքի գծով, քանի որ այդ մակրոտնտեսական գործոնները և անցյալ ժամանակաշրջանների կորուստների դրույքները փոխկապակցված չեն: Պահուստավորման մատրիցը վերանայվում է եռամսյակային կտրվածքով:

Խմբային հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը որոշվում է ստորև ներկայացված պահուստավորման մատրիցի համաձայն: Պահուստավորման մատրիցը հիմնված է ակտիվի ժամկետանց լինելու օրերի քանակի վրա: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստավորման մատրիցը ներկայացված է ստորև.

| **հազ. դրամ** | **Ընթացիկ՝ ոչ ժամկետանց** | **1-30 օր ժամկետանց** | **31-60 օր ժամկետանց** | **61-90 օր ժամկետանց** | **91-120 օր ժամկետանց** | **Ավելի քան 121 օր ժամկետանց** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համախառն առևտրական դեբիտորային պարտքեր | 2,934,912 | 335,440 | 95,211 | 83,346 | 77,705 | 1,340,590 | 4,867,204 |
| Ակնկալվող կորստի դրույք, % | 1% | 5% | 18% | 23% | 28% | 100% | |
| Ակնկալվող պարտքային կորուստներ | (13,529) | (15,805) | (16,900) | (19,553) | (21,552) | (1,340,590) | (1,427,929) |
| **Ընդամենը զուտ առևտրային դեբիտորական պարտքեր** | **2,921,383** | **319,635** | **78,311** | **63,793** | **56,153** | **-** | **3,439,275** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստավորման մատրիցը ներկայացված է ստորև.

| **հազ. դրամ** | **Ընթացիկ՝ ոչ ժամկետանց** | **1-30 օր ժամկետանց** | **31-60 օր ժամկետանց** | **61-90 օր ժամկետանց** | **91-120 օր ժամկետանց** | **Ավելի քան 121 օր ժամկետանց** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համախառն առևտրական դեբիտորային պարտքեր | 3,232,942 | 339,358 | 154,268 | 138,290 | 106,635 | 1,101,912 | 5,073,406 |
| Ակնկալվող կորստի դրույք, % | 2% | 18% | 44% | 65% | 81% | 100% | |
| Ակնկալվող պարտքային կորուստներ | (67,157) | (59,743) | (67,946) | (90,321) | (86,101) | (1,101,912) | (1,473,180) |
| **Ընդամենը զուտ առևտրային դեբիտորական պարտքեր** | **3,165,786** | **279,615** | **86,322** | **47,969** | **20,534** | **-** | **3,600,226** |

Իրավաբանական անձանց՝ 1 միլիարդ դրամը գերազանցող մնացորդով առևտրային դեբիտորական պարտքերն Ընկերությունը գնահատում է անհատական հիմունքով: Այդ առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում ներառում են «առևտրային դեբիտորական պարտքեր՝ այլ առևտուր» հոդվածը վերը ներկայացված աղյուսակում: Ընկերությունը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանիշ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդի մասին մամուլում հրապարակված տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանիշը սահմանվում է որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանիշների հետ ինչպիսին «Moody's»-ն է: Ընկերությունն անհատական հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է ելնելով ժամկետանց լինելու կարգավիճակից և վերջին երկու տարիների փաստացի պարտքային կորուստների փորձից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվածության, ակնկալվող պարտքային կորուստների և անհատական հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի պարտքային որակի վերաբերյալ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **հազ. դրամ** | **Ամբողջ ժամկետում ԱՊԿ՝ չարժեզրկված 2025թ.** | **Ամբողջ ժամկետում ԱՊԿ՝ չարժեզրկված 2024թ.** |
|---|---|---|
| **Անհատական հիմունքով գնահատվող համախառն առևտրային դեբիտորական պարտքեր** | **6,318,081** | **6,473,072** |
| Ակնկալվող պարտքային կորուստներ | (466,746) | (421,274) |
| **Անհատական հիմունքով գնահատվող զուտ առևտրային դեբիտորական պարտքեր** | **5,851,335** | **6,051,798** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային կորուստների պահուստի փոփոխությունները տարեկան ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| **Պարտքային կորուստների պահուստը հունվարի 1-ի դրությամբ** | **1,894,454** | **2,628,070** |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախսի փոփոխություններ | 174,909 | (511,588) |
| Դուրսգրումներ | (174,688) | (222,028) |
| **Պարտքային կորուստների պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,894,675** | **1,894,454** |

4,740,051 հազար դրամ գումարով առևտրային դեբիտորական պարտքերը (2024թ-ին՝ 4,142,288 հազար դրամ) արտահայտված են արտարժույթով, որից 52%-ը՝ ԱՄՆ դոլարով (2024թ-ին՝ 54%), 8%-ը՝ հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ) (2024թ-ին՝ 7%) և 39%-ը՝ եվրոյով (2024թ-ին՝ 38%):

# 14. Կանխավճարներ և պայմանագրի գծով ակտիվներ

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Կանխավճարներ մատակարարներին | 1,715,169 | 2,917,067 |
| Կանխավճարված ծախսեր | 135,552 | 74,128 |
| Ընթացիկ կանխավճարներ օգտագործման անվերապահ իրավունքի համար | 449,325 | - |
| Պայմանագրի գծով ակտիվներ, ընթացիկ | 47,748 | 45,804 |
| | **2,347,794** | **3,036,999** |

## 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Բանկային հաշիվների ցպահանջ մնացորդներ | 9,045,620 | 7,807,296 |
| Դրամական միջոցներ ճանապարհին | 56,195 | 63,744 |
| Դրամական միջոցներ դրամարկղում | 32,961 | 34,418 |
| | **9,134,776** | **7,905,458** |

Բանկային հաշիվների մնացորդները պահվում են Հայաստանի Հանրապետությունում գործող տասը խոշոր բանկերում, դրանց մեծամասնությունը պահվում է «S&P Global» վարկանիշային գործակալության B+ վարկանիշ ունեցող բանկերում: Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ, ժամկետանց կամ արժեզրկված չեն և դրանց գծով ակնկալվող պարտքային կորուստներն էական գումար չեն կազմում:

## 16. Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանն անմիջականորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ներկայացվում են սեփական կապիտալում՝ որպես նվազեցում մուտքերից՝ հարկումից հետո: Ստացված հատուցման իրական արժեքի՝ թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող մասը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ՝ սեփական կապիտալում:

| **հազ. դրամ** | **Շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի թիվը** | **Սովորական բաժնետոմսեր** | **Էմիսիոն եկամուտ** | **Ընդամենը կանոնադրական կապիտալ** |
|---|---|---|---|---|
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 228,377,090 | 0.100 | 0.106 | 22,837,709 |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 228,377,090 | 0.100 | 0.106 | 22,837,709 |
| 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 228,377,090 | 0.100 | 0.106 | 22,837,709 |

Սովորական բաժնետոմսերի ընդհանուր հայտարարված քանակը կազմում է 228,377 հազար (2024թ-ին՝ 228,377 հազար)՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով (2024թ-ին՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով): Բաժնետոմսերը դասվում են 2 դասի՝ Ա և Բ: Ա դասի 1 բաժնետոմսը տալիս է 1 ձայնի իրավունք, Բ դասի 10 բաժնետոմսերը տալիս են 1 ձայնի իրավունք: Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերը ամբողջությամբ վճարված են:

Ընկերության սովորական բաժնետոմսերին տիրապետող յուրաքանչյուր բաժնետերն իրավունք ունի.

- մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին ձայնի իրավունքով բոլոր հարցերի հետ կապված՝ իրեն պատկանող ամբողջությամբ վճարված քվեարկող բաժնետոմսերին համապատասխան,
- ստանալ շահաբաժիններ,
- ստանալ գույքի համապատասխան մասնաբաժինն Ընկերության լուծարման դեպքում,
- անվճար ստանալ նոր թողարկված բաժնետոմսեր օրենքով սահմանված դեպքերում Ընկերության շահույթի, պահուստների և/կամ ակտիվների կապիտալացման միջոցով բաժնետիրական կապիտալի ավելացման դեպքում՝ տվյալ պահին բաժնետիրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

Շահաբաժինները ներկայացվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում և հաստատվում են: Շահաբաժինները, որոնք հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո և մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը, բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ ծանոթագրությունում: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

# 17. Թողարկված պարտատոմսեր

Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին պարտատոմսերը ճանաչում է իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով:

Ընկերության պարտատոմսերն արտահայտված են հետևյալ արժույթներով.

| **հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2025թ.** | **31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---|---|
| Պարտատոմսեր արտահայտված՝ | | |
| – ԱՄՆ դոլարով | 20,773,575 | 21,363,872 |
| – ՀՀ դրամով | 7,533,876 | 7,788,181 |
| **Ընդամենը փոխառություններ** | **28,307,451** | **29,152,052** |

Ընկերությունը չի կիրառում հեջի հաշվառում արտարժույթով արտահայտված պարտականությունների կամ տոկոսադրույքային ռիսկի նկատմամբ:

2024թ. դեկտեմբերին Ընկերությունը թողարկել է կայուն զարգացման հետ կապված արժեկտրոնային պարտատոմսերի 3 տրանշ՝ 30,096,950 հազար դրամ ընդհանուր արժեքով, որից 1-ին տրանշը կազմում է 18,136,350 հազար դրամ (45,000,000 ԱՄՆ դոլար), 2-րդ տրանշը՝ 8,060,600 հազար դրամ (20,000,000 ԱՄՆ դոլար) և 3-րդ տրանշը՝ 3,900,000 հազար դրամ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 հազար դրամ՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար և 100 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար: Ընկերությունը պարտատոմսերից ստացված միջոցներն օգտագործել է թողարկման պահին առկա բանկային վարկերի մարման և կապիտալ ծախսումների համար, ինչպես նշված է համապատասխան ազդագրում:

Պարտատոմսերի թողարկման հետ կապված Ընկերությունը կրել է անդերրայթինգի վճարների գծով ծախսեր: Այդ ծախսերը հաշվառվում են որպես գործարքի գծով ծախսեր և ներառվում են պարտատոմսերի արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում: Այդ ծախսերը հետաձգվում են պարտատոմսերի ժամկետի ընթացքում:

***Համապատասխանություն սահմանափակող պայմաններին (կովենանտներին).*** Ընկերությունը պարտավոր է ապահովել համապատասխանություն պարտատոմսերի ազդագրով սահմանված որոշ սահմանափակող պայմանների (կովենանտների) հետ: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է այդ սահմանափակող պայմանները: Ղեկավարության գնահատմամբ Ընկերությունը հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում կպահպանի պարտքային պարտավորությունների պայմանագրերի բոլոր միջանկյալ կովենանտները:

# 18. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

***Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ***. վարձակալության պայմանագրերը կարող են պարունակել վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներ: Ընկերությունը պայմանագրով սահմանված հատուցումը վերագրում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներին՝ հիմք ընդունելով դրանց առանձին գինը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

| | **Օգտակար ծառայության ժամկետը՝ տարիներով** |
|---|---|
| – Հող | 7 |
| – Շենքեր, գրասենյակներ, խանութներ | 3 - 5 |
| – Տարածքներ սարքավորումների համար | 7 |
| – Սարքավորումներ | 3 - 7 |

***Վարձակալության գծով պարտավորություններ***. վարձակալության պայմանագրերից առաջացող պարտավորությունները սկզբնապես չափվում են ներկա արժեքով:

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են Ընկերության մի շարք պայմանագրերով: Այդ պայմաններն օգտագործվում են ապահովելու համար առավելագույն գործառնական ճկունություն Ընկերության գործունեությունում օգտագործվող ակտիվները կառավարելիս: Պարտավորության չափման մեջ ներառվում են նաև վարձաճարները, որոնք կվճարվեն, եթե առկա է ողջամիտ համոզվածություն, որ վարձակալությունը կերկարաձգվի:

Ընդհանուր առմամբ, վարձավճարները զեղչվում են՝ օգտագործելով Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ այն տոկոսադրույքը, որն Ընկերությունը ստիպված կլիներ վճարել այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համանման ժամկետով, պայմաններով և ապահովմամբ համանման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվ ձեռք բերելու համար:

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելիս Ընկերությունը՝

- հնարավորության դեպքում, որպես ելակետային տեղեկատվություն օգտագործում է առանձին վարձակալի կողմից վերջերս երրորդ կողմից ստացված ֆինանսավորումը՝ ճշգրտված արտացոլելու համար ֆինանսավորման պայմանների փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ֆինանսավորումը ստանալուց հետո,
- օգտագործում է աճողական մոտեցումը, որի դեպքում հաշվարկը սկսվում է ոչ ռիսկային տոկոսադրույքից՝ ճշգրտված պարտքային ռիսկի մասով, և
- կատարում է վարձակալությանը բնորոշ ճշգրտումներ, օրինակ՝ ժամկետի, երկրի, արժույթի և գրավի մասով:

Ընկերությունը վարձակալում է տարբեր գրասենյակներ և տեխնիկական տարածքներ՝ հողատարածքների վրա և շենքերում: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են մեկից տասը տարի ֆիքսված ժամկետով:

| հազ. դրամ | Հող | Շենքեր, գրասենյակներ, խանութներ | Սարքավո-րումներ | ՕԱԻ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 513,186 | 3,961,950 | 1,081,039 | - | 5,556,175 |
| Տարվա մաշվածության ծախս | (123,614) | (1,645,511) | (346,834) | - | (2,115,959) |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ | 42,627 | 1,503,602 | 1,049,125 | - | 2,595,354 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ապաճանաչում | (4,654) | (109,529) | - | - | (114,183) |
| **Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **427,545** | **3,710,512** | **1,783,330** | **-** | **5,921,387** |
| | | | | | |
| Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ | 427,545 | 3,710,512 | 1,783,330 | - | 5,921,387 |
| Տարվա մաշվածության ծախս | (117,475) | (1,811,566) | (694,018) | (38,301) | (2,661,360) |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ | 14,219 | 3,133,428 | 2,027,826 | 331,496 | 5,506,969 |
| Վարձակալության ժամկետի ճշգրտում* | - | 1,108,643 | - | - | 1,108,643 |
| **Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **324,289** | **6,141,017** | **3,117,138** | **293,195** | **9,875,639** |

* 2025թ. ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը հայտնաբերել է, որ սարքավորումների համար օգտագործվող վարձակալված տարածքների վարձակալության ժամկետը սխալ է որոշվել: Ղեկավարությունը վերահաշվարկել է ազդեցությունն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալական գծով պարտավորությունների վրա և, հաշվի առնելով դրա ոչ էական լինելը ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջության համար, կատարել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալական գծով պարտավորությունների ճշգրտում առաջընթաց:

Ընկերությունը կնքում է ՕԱԻ պայմանագրեր հեռահաղորդակցության հզորության ձեռքբերման համար: Այն դեպքերում, երբ պայմանագիրն Ընկերությանը տրամադրում է կոնկրետ որոշակիացված ցանցային ենթակառուցվածքի ամբողջ հզորությունն օգտագործելու իրավունք, այդ պայմանագրով փոխանցվում է հիմքում ընկած ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Համապատասխանաբար, ՕԱԻ պայմանագրերը ճանաչվում են որպես օգտագործման իրավունքի ակտիվ, քանի որ դրանք, ըստ էության, Ընկերությանը տրամադրում են հիմքում ընկած ենթակառուցվածքի բացառիկ օգտագործման իրավունք պայմանագրի ժամկետի ընթացքում:

Ընկերությունը ճանաչել է վարձակալության գծով պարտավորությունները հետևյալ կերպ.

| հազ. դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Վարձակալության գծով ընթացիկ պարտավորություններ | 2,650,802 | 2,039,264 |
| Վարձակալության գծով ոչ ընթացիկ պարտավորություններ | 5,443,034 | 3,870,684 |
| **Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ** | **8,093,836** | **5,909,948** |

Տրանսպորտային միջոցների վարձակալությունը համարվում է կարճաժամկետ վարձակալություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ*

| հազ. դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 770,823 | 745,988 |
| Կարճաժամկետ վարձակալությանը վերաբերող ծախսեր | - | 70,826 |

*Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ*

| հազ. դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով | **4,380,346** | **3,650,350** |

# 19. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների և Ընկերության ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար: Այդ պարտավորություններն իրենցից ներկայացնում են դրամական հոսքերի մասին հաշվետվությունում որպես ֆինանսավորման պարտավորություններ արտացոլված պարտավորությունները:

| հազ. դրամ | Թողարկված պարտատոմսեր | Վարձակալության գծով պարտավորու-թյուններ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ** | **29,152,052** | **5,909,948** | **35,062,000** |
| *Դրամական հոսքեր* | | | |
| Տոկոսների վճարումներ | (2,431,587) | (770,823) | (2,431,587) |
| Մայր գումարի մարումներ | - | (3,609,523) | - |
| *Ոչ դրամական փոփոխություններ* | | | |
| Հաշվեգրված տոկոսներ | 2,605,547 | 770,823 | 2,605,547 |
| Նոր վարձակալություն | - | 4,694,769 | 4,694,769 |
| Վարձակալության ժամկետի ճշգրտում (Ծնթզ. 18) | - | 1,098,642 | 1,098,642 |
| Արտարժույթի փոխարժեքի գծով ճշգրտումներ | (1,018,561) | - | (1,018,561) |
| **Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **28,307,451** | **8,093,836** | **34,217,399** |

| հազ. դրամ | Թողարկված պարտատոմսեր | Բանկային վարկեր | Վարձակալության գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **-** | **18,997,155** | **6,326,105** | **25,323,260** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | |
| Ստացված վարկեր | - | 1,571,750 | - | 1,571,750 |
| Թողարկված պարտատոմսեր | 28,884,072 | - | - | 28,884,072 |
| Մայր գումարի մարումներ | - | (20,076,440) | (3,650,350) | (23,726,790) |
| Տոկոսների վճարումներ | - | (2,024,384) | (273,346) | (2,297,730) |
| ***Ոչ դրամական փոփոխություններ*** | | | | |
| Հաշվեգրված տոկոսներ | 120,287 | 2,086,401 | 745,988 | 2,952,676 |
| Նոր վարձակալություն | - | - | 2,595,353 | 2,595,353 |
| Արտարժույթի փոխարժեքի գծով ճշգրտումներ | 147,693 | (527,968) | - | (380,275) |
| Ապաճանաչում | - | - | (114,182) | (114,182) |
| Այլ | - | (26,514) | 280,380 | 253,866 |
| **Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **29,152,052** | **-** | **5,909,948** | **35,062,000** |

# 20. Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստներ

Հիմնական միջոցների միավորի ապամոնտաժման և ապատեղակայման գնահատված ծախսերը (ակտիվների ապագործարկման պարտականություններ) ավելացվում են միավորի սկզբնական արժեքին ձեռք բերման պահին կամ միավորը որոշակի ժամանակահատվածում օգտագործելու ընթացքում: Երբ ակտիվների ապագործարկման առկա պարտականության չափման հետ կապված տեղի են ունենում փոփոխություններ պարտականության կատարման համար պահանջվող՝ տնտեսական օգուտներ պարունակող ռեսուրսների արտահոսքի գնահատված ժամկետների կամ գումարի կամ զեղչման դրույքի փոփոխությունների արդյունքում, համապատասխան ակտիվի սկզբնական արժեքը ճշգրտվում է:

Ստորև ներկայացված են ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստների փոփոխությունները:

| հազ. դրամ | Սարքավորումների ապամոնտաժում և վարձակալված տարածքների վերականգնում |
|---|---|
| **Հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **1,563,669** |
| Ներկա արժեքի զեղչի ամորտիզացիա | 175,853 |
| Գնահատումների փոփոխություններ՝ ճշգրտված հիմնական միջոցների մասով (կապիտալացված) | 538 |
| **Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,740,060** |
| Ներկա արժեքի զեղչի ամորտիզացիա | 171,203 |
| Գնահատումների փոփոխություններ՝ ճշգրտված հիմնական միջոցների մասով (կապիտալացված) | (122,857) |
| **Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,788,406** |

# 21. Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական պարտքերը հաշվեգրվում են, երբ պայմանագրի կողմը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտականությունները և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր հետևյալի գծով. | | |
| – Ձեռք բերված ծառայություններ | 5,892,842 | 6,812,101 |
| – Ձեռք բերված սարքավորումներ | 3,767,699 | 1,793,894 |
| – Ձեռք բերված ոչ նյութական ակտիվներ | 1,568,854 | 591,393 |
| – Ձեռք բերված պաշարներ | 713,394 | 594,933 |
| – Ռոումինգի ծառայություններ | 637,252 | 500,779 |
| – Շինարարական աշխատանքներ | 576,666 | 324,229 |
| Ձեռք բերված մասնագիտական ծառայություններ | 57,600 | 57,600 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 972 | 906 |
| **Ընդամենը առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր, ընթացիկ** | **13,215,279** | **10,675,835** |

9,743,928 հազար դրամ գումարով առևտրային կրեդիտորական պարտքերը (2024թ-ին՝ 5,948,168 հազար դրամ) արտահայտված են արտարժույթով, որից 39%-ը՝ ԱՄՆ դոլարով (2024թ-ին՝ 52%), 58%-ը՝ եվրոյով (2024թ-ին՝ 44%) և 2%-ը՝ հատուկ փոխառության իրավունքով (2024թ-ին՝ 4%):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ այլ ֆինանսական կրեդիտորական պարտքերը ներառում են որոշ սարքավորումների գծով մատակարարի երկարաժամկետ առևտրային կրեդիտորական պարտքի ոչ ընթացիկ մասը՝ 2,768,993 հազար դրամ (6,166,885 եվրո) անվանական արժեքով (2024թ-ին՝ 2,427,248 հազար դրամ (5,864,475 եվրո)), որը հաշվետու ամսաթվի դրությամբ զեղչվել է մինչև 2,689,989 հազար դրամ (2024թ-ին՝ 2,225,869 հազար դրամ) և հաշվառվել է ամորտիզացված արժեքով՝ 6.40% տոկոսադրույքով:

# 22. Կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված կանխավճարների մնացորդները հետևյալն են՝

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Հեռահաղորդակցության ոլորտի գործընկերներից ստացված կանխավճարներ և նրան հետ պայմանագրի գծով պարտավորություններ | 2,393,681 | 2,288,249 |
| Բաժանորդներից ստացված կանխավճարներ | 689,794 | 762,522 |
| Վարձակալությունից ստացված կանխավճարներ (Ընկերությունը՝ որպես վարձատու) | 340,340 | 429,176 |
| Հեռահաղորդակցության ոլորտի գործընկերներից ստացված կանխավճարներ ՕԱԻ համար | 2,832,817 | 2,035,129 |
| Հետաձգված եկամուտ | 39,192 | 19,254 |
| Այլ ստացված կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ | 427,919 | 487,605 |
| **Ընդամենը ստացված կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ** | **6,723,743** | **6,021,935** |

Պայմանագրի գծով պարտավորությունները ներառում են մութ օպտիկամանրաթելի ՕԱԻ պայմանագրերի շրջանակում ստացված կանխավճարները, որոնց գծով հասույթը ճանաչվում է պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, ինչպես նաև հաճախորդների կանխավճարները և հետաձգված հասույթը, որոնք վերաբերում են բաժանորդներից որպես կանխավճար ստացված հատուցումներին, որոնց գծով հասույթը ճանաչվում է ծառայության մատուցման պահին:

354,090 հազար դրամ գումարը, որը ճանաչվել է պայմանագրի գծով պարտավորությունների կազմում ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, ճանաչվել է որպես հասույթ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար (2024թ-ին՝ 207,040 հազար դրամ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՕԱԻ պայմանագրերի գծով մնացած կատարման պարտականությունները կազմում են 2,832,817 հազար դրամ (2024թ-ին՝ 2,035,129 հազար դրամ) և զեղչվում են 12-13% դրույքով:

Ակնկալվում է, որ պայմանագրի գծով պարտավորությունների կազմում ներառված ՕԱԻ պայմանագրերի գծով մնացած կատարման պարտականությունները կճանաչվեն ապագա ժամանակաշրջանների հասույթի կազմում հետևյալ կերպ.

| **հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2025թ.** | **31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---|---|
| Մինչև 1 տարի | 410,331 | 292,030 |
| 1-ից 2 տարի | 364,079 | 261,592 |
| 2-ից 5 տարի | 863,732 | 620,163 |
| Ավելի քան 5 տարի | 1,194,675 | 861,344 |
| | **2,832,817** | **2,035,129** |

Տեղեկատվություն չի տրամադրվել 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացած կատարման պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնական ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ պակաս, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

## 23. Հասույթ

***Հասույթի ճանաչում.*** Ընկերությունը հասույթը ստանում է ձայնային ծառայությունների, տվյալների փոխանցման և հեռահաղորդակցության այլ ծառայությունների մատուցումից՝ անլար, ֆիքսված և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների միջոցով, ինչպես նաև սարքավորումների և պարագաների վաճառքից: Ապրանքները և ծառայությունները կարող են վաճառվել առանձին կամ փաթեթներով: Հասույթը ճանաչվում է այնքանով, որքանով Ընկերությունը պայմանագրի շրջանակում առաքել է ապրանքները կամ մատուցել է ծառայությունները, հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել և հավանական է, որ Ընկերություն կհոսեն գործարքի հետ կապված տնտեսական օգուտները:

***Ծառայություններից ստացվող հասույթ.*** ծառայություններից ստացվող հասույթը ներառում է պայմանագրերի և կանխավճարային համակարգի պայմանագրերի շրջանակներում եթերաժամանակի համար գանձվող վճարները՝ համաձայն բաժանորդագրության պայմանագրերի, ամսական բաժանորդագրության վճարները, միջցանցային միացման ծառայությունների վճարները, ռոումինգի և լրացուցիչ ծառայությունների վճարները: Լրացուցիչ ծառայությունները ներառում են կարճ հաղորդագրությունները (SMS), մուլտիմեդիայի հաղորդագրությունները (MMS), զանգահարողի նույնականացումը (caller ID), զանգերի սպասարկումը, տվյալների փոխանակումը, բջջային ինտերնետը, ներբեռնվող բովանդակությունը և այլ ծառայությունները:

Միջցանցային միացման գծով հասույթն առաջանում է, երբ Ընկերությունը տրաֆիկ է ստանում այլ օպերատորների բջջային կամ ֆիքսված կապի բաժանորդներից, և այդ տրաֆիկը դադարեցվում է Ընկերության ցանցում: Ռոումինգից հասույթը ներառում է ինչպես Ընկերության հաճախորդներից ստացված հասույթը, որոնք ռոումինգից օգտվում են իրենց երկրի ցանցից դուրս, այնպես էլ այլ անլար կապի օպերատորներից ստացվող հասույթը՝ վերջիններիս հաճախորդների կողմից Ընկերության ցանցում ռոումինգից օգտվելու դիմաց: Հասույթի երկու ուղղությունների համար էլ Ընկերությունն ունի մեկ կատարման պարտականություն և բջջային կապի օգտագործման և ռոումինգի ծառայություններից ստացվող հասույթը ճանաչում է հիմնվելով մշակված տրաֆիկի րոպեների վրա՝

ժամանակի ընթացքում: Միջազգային ռոումինգ զանգերի համար օտարերկրյա օպերատորներից ստացվող հասույթը ճանաչվում է զանգի կատարման ժամանակաշրջանում:

Ֆիքսված ժամկետով ծառայություններից, այդ թվում՝ ֆիքսված սակագնային պլաններից և ամսական բաժանորդագրություններից ստացվող հասույթը, որպես կանոն, ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ գծային հիմունքով: «Վճարիր ըստ օգտագործման» սակագնային պլանների դեպքում, երբ հաճախորդը վճարում է հիմնվելով փաստացի օգտագործման վրա, հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ օգտագործման հիմունքով: Որոշ սակագնային պլաններ հաճախորդներին հնարավորություն են տալիս հաջորդ ժամանակաշրջան փոխանցել չօգտագործված ծառայությունները: Այդ սակագնային պլաններից ստացվող հասույթը, որպես կանոն ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ օգտագործման հիմունքով: Չօգտագործված եթերաժամանակը չի ճանաչվում որպես հասույթ մինչև համապատասխան ծառայությունը չմատուցվի բաժանորդին կամ մինչև չլրանա կանխավճարային բաժանորդագրության ժամկետը: Ծառայությունների մի քանի բաղադրիչ (օրինակ՝ ձայնային կապ, տեքստային հաղորդագրություններ, տվյալների փոխանցում) ներառող պայմանագրերի համար հասույթը բաշխվում է առանձին վաճառքի գնի հիման վրա: Այդ ծառայությունների առանձին վաճառքի գինը որոշվում է հաշվի առնելով այն գինը, որը գանձվում է նմանատիպ հաճախորդներից «վճարիր ըստ օգտագործման» սակագնային պլանի շրջանակում:

Որոշ մութ օպտիկամանրաթելի ՕԱԻ պայմանագրերի շրջանակում, որոնց գործողության ժամկետը 15 տարի է և որոնց համաձայն Ընկերությունը կրում է ցանցի սպասարկման պարտավորությունը և դրան առնչվող վերադարձի ռիսկը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, Ընկերությունը հաճախորդներից ստացված սկզբնավճարները հետաձգում է մինչև 15 տարի ժամկետով: Նման դեպքերում Ընկերությունը հետաձգում է հասույթը և ամորտիզացնում է պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում գծային մեթոդով՝ ճանաչելով շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Ընկերության և վերջինիս հաճախորդների միջև կնքված այս պայմանագրերը ներառում են ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ՝ հաշվի առնելով ծառայությունների համար հաճախորդի կողմից վճարման պահի և Ընկերության կողմից հաճախորդին ծառայությունների մատուցման պահի միջև ժամանակի տևողությունը: Այդ պայմանագրերով նախատեսված գործարքի գինը ճշգրտվում է փողի ժամանակային արժեքի մասով՝ օգտագործելով զեղչման դրույքը, որը կկիրառվեր պայմանագրի մեկնարկի պահին Ընկերության և հաճախորդի միջև կնքվող ֆինանսավորման առանձին գործարքում:

***Սկզբնավճարները***, ներառյալ ակտիվացման կամ միացման վճարները, ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ գծային հիմունքով պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Անորոշ ժամկետով պայմանագրերի (որպես կանոն՝ կանխավճարային պայմանագրերի) դեպքում սկզբնավճարներից հասույթը ճանաչվում է հաճախորդի գոյության միջին տևողության ընթացքում:

Այլ օպերատորներից ստացվող հասույթը, ներառյալ միջցանցային միացումների և ռոումինգի վճարները, ճանաչվում է պայմանագրով սահմանված գնի հիման վրա՝ առանց ծավալի համար նախատեսվող ենթադրվող հետընթաց զեղչերի: Կուտակված փորձն օգտագործվում է զեղչերի գնահատման և տրամադրման համար:

Ծառայություններից ստացվող ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

***Սարքավորումների և պարագաների վաճառք***. սարքավորումները և պարագաները սովորաբար հաճախորդներին վաճառվում են առանձին կամ ծառայությունների փաթեթների հետ միասին: Ծառայությունների փաթեթների հետ միասին վաճառքի դեպքում հասույթը բաշխվում է համամասնորեն՝ ելնելով սարքավորումների և ծառայությունների փաթեթի առանձին վաճառքի գնից: Բջջային հեռախոսների և պարագաների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ սարքը վաճառվում է ցանցի հաճախորդին կամ, միջնորդի միջոցով վաճառքի դեպքում, երբ միջնորդը ստանում է հսկողություն սարքի նկատմամբ և միջնորդը չունի վերադարձման մնացած իրավունք:

Սարքավորումների և պարագաների վաճառքից ստացվող ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին:

***Պայմանագրի գծով մնացորդներ***. դեբիտորական պարտքերը և պայմանագրի գծով ակտիվները հիմնականում վերաբերում են վճարային գործակալներից, այլ օպերատորներից և հետվճարային հաճախորդներից ստացվելիք գումարներին:

Պայմանագրի գծով պարտավորությունները հիմնականում վերաբերում են կանխավճարային հաճախորդներից ֆիքսված ժամկետով սակագնային պլանների կամ փաստացի օգտագործման վրա հիմնված սակագնային պլանների շրջանակում ստացված չփոխհատուցվող դրամական միջոցներին:

Պայմանագրի գծով պարտավորությունները ներկայացվում են որպես «հետաձգված եկամուտ» և «ստացված կանխավճարներ»՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Տարվա սկզբի դրությամբ առկա «հետաձգված եկամտի» բոլոր մնացորդները ճանաչվել են որպես հասույթ տարվա ընթացքում:

Կանխավճարային քարտերի վաճառքը, որն օգտագործվում է որպես դրամական միջոցների հավաքագրման մեթոդ, հաշվառվում է որպես հաճախորդներից ստացված կանխավճար ապագա ծառայությունների համար, և համապատասխան հասույթը հետաձգվում է մինչև հաճախորդի կողմից եթերաժամանակի օգտագործումը: Կանխավճարային քարտերը կարող են լինել անժամկետ, սակայն նրանց գործողության ժամկետը սահմանափակվում է օրենսդրությամբ, իսկ չօգտագործված կանխավճարային մնացորդները ներառվում են ծառայություններից ստացվող հասույթում՝ հիմնվելով ակնկալվող մնացորդի գնահատման վրա, որի ժամկետը կլրանա առանց օգտագործվելու:

***Հաճախորդների ներգրավման ծախսեր.*** հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կատարվող որոշակի լրացուցիչ ծախսերը («հաճախորդների ներգրավման ծախսեր») ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված ծախսեր: Այդ ծախսերը սովորաբար վերաբերում են երրորդ կողմ հանդիսացող վաճառողներին և Ընկերության անձնակազմին վճարվող միջնորդավճարներին և ամորտիզացվում են գծային մեթոդով՝ հաճախորդի գոյության միջին տևողության ընթացքում: Ընկերությունը կիրառում է գործնական պարզեցումներ հաճախորդների ներգրավման այն ծախսերի համար, որոնց ամորտիզացիայի ժամկետը 12 ամսից պակաս է: Այդ ծախսերը հիմնականում վերաբերում են երրորդ կողմ հանդիսացող վաճառողներին վճարվող միջնորդավճարներին՝ կանխավճարային հաշիվների լիցքավորման և լիցքավորման քարտերի վաճառքի դեպքում:

***Հաճախորդի գոյության միջին տևողություն.*** հաճախորդի գոյության միջին տևողությունը հաշվարկվում է անցյալ ժամանակաշրջանների տվյալների, մասնավորապես՝ տարբեր սեգմենտների (բջջային և ֆիքսված հեռախոսակապի, կանխավճարային և հետվճարային) հաճախորդների արտահոսքի ցուցանիշների հիման վրա: Ողջ հասույթը գոյանում է Հայաստանում, քանի որ ծառայությունները մատուցվում են Հայաստանում:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| ***Ժամանակի ընթացքում*** | | |
| Բջջային կապի ծառայություններ՝ տվյալների փոխանակում | 10,759,264 | 10,105,754 |
| Բջջային կապի ծառայություններ՝ ձայնային կապ | 1,978,311 | 2,562,140 |
| Բջջային կապի ծառայություններ՝ միջցանցային միացում | 1,549,227 | 1,795,789 |
| Բջջային կապի ծառայություններ՝ ռոումինգ | 1,091,117 | 859,592 |
| Բջջային կապի ծառայություններ՝ այլ | 1,595,096 | 1,409,888 |
| **Հասույթ բջջային կապի ծառայություններից** | **16,973,015** | **16,733,163** |
| ***Ժամանակի ընթացքում*** | | |
| Ֆիքսված կապի ծառայություններ՝ ինտերնետ | 5,988,696 | 5,780,533 |
| Ֆիքսված կապի ծառայություններ՝ տարանցիկ | 2,977,789 | 3,495,432 |
| Ֆիքսված կապի ծառայություններ՝ ձայնային կապ | 2,646,385 | 3,012,461 |
| Ֆիքսված կապի ծառայություններ՝ միջցանցային միացում | 75,851 | 99,462 |
| Ֆիքսված կապի ծառայություններ՝ այլ | 1,179,194 | 1,013,057 |
| **Հասույթ ֆիքսված կապի ծառայություններից** | **12,867,915** | **13,400,945** |
| Հասույթ լիցքավորման կայաններից | 1,156,407 | 317,265 |
| Այլ հասույթ | 918,322 | 385,232 |
| **Ընդամենը հասույթ** | **2,074,729** | **702,497** |
| ***Ժամանակի որոշակի պահին*** | | |
| Սարքավորումներ՝ բջջային կապի ծառայություններ | 2,791,158 | 2,666,561 |
| Սարքավորումներ՝ ֆիքսված կապի ծառայություններ | 16,059 | 34,494 |
| **Հասույթ սարքավորումների վաճառքից** | **2,807,217** | **2,701,055** |
| Հասույթ վարձակալությունից | 1,127,457 | 1,510,985 |
| **Ընդամենը հասույթ** | **35,850,333** | **35,048,645** |

# 24. Վաճառքի ինքնարժեք

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| ***Մատուցված ծառայությունների ինքնարժեք*** | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 8,290,669 | 7,680,376 |
| Անձնակազմի գծով ծախսեր | 2,870,857 | 2,707,136 |
| Հաճախականության օգտագործման թույլտվության վճարներ | 2,630,675 | 2,630,675 |
| Ինտերնետ և այլ կապուղիներ | 2,597,257 | 2,357,613 |
| Բջջային կապի միջցանցային միացման ծառայությունների ծախսեր | 1,664,279 | 1,854,487 |
| Էլեկտրաէներգիայի գծով ծախսեր | 1,478,403 | 1,550,014 |
| Սարքավորումների և կապուղիների սպասարկման ծախսեր | 940,438 | 1,036,203 |
| Լիցքավորման կայանների էլեկտրաէներգիայի գծով ծախսեր | 931,137 | 268,104 |
| Ռոումինգի ծառայությունների ծախսեր | 415,968 | 257,625 |
| Ֆիքսված կապի միջցանցային միացման ծառայությունների ծախսեր | 359,642 | 380,287 |
| Վառելիքի ծախսեր | 170,034 | 170,292 |
| Ծառայությունների գծով ԱԱՀ | 155,843 | 203,561 |
| Տրանսպորտային միջոցների վարձակալություն | 96,436 | 70,826 |
| Գործուղումների և դասընթացների ծախսեր | 91,697 | 49,838 |
| SIM քարտեր | 85,244 | 66,080 |
| Այլ | 498,643 | 623,065 |
| **Ընդամենը մատուցված ծառայությունների ինքնարժեք** | **23,277,222** | **21,906,182** |
| | | |
| ***Վաճառված սարքավորումների ինքնարժեք*** | | |
| Սարքավորումներ՝ բջջային ծառայություններ | 2,661,460 | 2,239,631 |
| **Ընդամենը վաճառված սարքավորումների ինքնարժեք** | **2,661,460** | **2,239,631** |
| **Ընդամենը վաճառքի ինքնարժեք** | **25,938,682** | **24,145,813** |

# 25. Այլ գործառնական եկամուտ

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Օգուտ հիմնական միջոցների օտարումից | 2,871,106 | - |
| Օգուտ պաշարների վաճառքից | 636,135 | 42,008 |
| Հիմնական միջոցների և պաշարների արժեզրկման հակադարձում | - | 349,796 |
| Եկամուտ տուգանքներից | 117,917 | 26,636 |
| Եկամուտ ստացված կանխավճարների և առևտրային կրեդիտորական պարտքերի դուրսգրումից | 42,747 | 44,823 |
| Օգուտ փոխարժեքային տարբերություններից՝ հանած վնասը գործառնական գործունեությունից | 13 | 46,948 |
| Այլ | 599 | 8,937 |
| | **3,668,517** | **519,148** |

# 26. Ընդհանուր և վարչական ծախսեր

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Անձնակազմի գծով ծախսեր | 2,516,382 | 2,180,413 |
| Մասնագիտական ծառայություններ | 1,441,956 | 1,234,697 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 703,290 | 663,383 |
| Վերանորոգման և սպասարկման ծախսեր | 129,157 | 128,801 |
| Չվերադարձվող հարկեր | 120,347 | 117,156 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 95,808 | 141,975 |
| Ապահովագրություն | 69,849 | 71,143 |
| Գործուղումների և դասընթացների ծախսեր | 65,530 | 65,034 |
| Անվտանգության ծախսեր | 20,982 | 51,541 |
| Ներկայացուցչական ծախսեր | 1,294 | 15,106 |
| Այլ | 212,031 | 113,227 |
| | **5,376,626** | **4,782,476** |

Մասնագիտական ծառայություններում ներառված է Ընկերության ՖՀՄՍ համաձայն պատրաստված 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը՝ 48,000 հազար դրամի չափով և ոչ աուդիտորական ծառայությունների արժեքը՝ 10,500 հազար դրամի չափով (2024թ-ին՝ աուդիտի արժեքը՝ 48,473 հազար դրամի չափով, ոչ աուդիտորական ծառայություններ չեն մատուցվել), որոնք վճարվել են կամ ենթակա են վճարման աուդիտորական ընկերությանը:

# 27. Իրացման ծախսեր

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Անձնակազմի գծով ծախսեր | 2,735,294 | 2,487,424 |
| Ինկասացիոն ծառայությունների ծախսեր | 310,046 | 314,768 |
| Գովազդի և շուկայավարման ծառայությունների ծախսեր | 237,529 | 527,244 |
| Լիցքավորման քարտերի գծով ծախսեր | 34,157 | 54,927 |
| Այլ ծախսեր | 82,810 | 94,218 |
| | **3,399,837** | **3,478,581** |

# 28. Այլ գործառնական ծախսեր

| հազ. դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Հարկերի մնացորդների դուրսգրում | 269,728 | - |
| Հիմնական միջոցների և պաշարների արժեզրկման ծախսեր | 55,405 | - |
| Չվերադարձվող այլ հարկեր | 76,837 | 24,914 |
| Անվճար տրամադրված ծառայություններ | 52,248 | 120,920 |
| Բարեգործություն և հովանավորություն | 90,400 | 11,400 |
| Չվերադարձվող ԱԱՀ | 33,906 | 21,874 |
| Հարկերի գծով տուգանք | 18,112 | 28,792 |
| Պաշարների արժեքի նվազում | 10,960 | 3,413 |
| Իրավական պահանջների գծով ծախսեր | 1,801 | 35,865 |
| Վնաս հիմնական միջոցների օտարումից | - | 502,404 |
| Այլ ծախսեր | 94,003 | 76,737 |
| **Ընդամենը այլ գործառնական ծախսեր** | **703,401** | **826,319** |

# 29. Ֆինանսական եկամուտ և ծախսեր

## Ֆինանսական եկամուտ

| հազ. դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառություններից | 1,542,468 | 1,521,318 |
| Տրամադրված փոխառությունների իրական արժեքի փոփոխություն | 149,230 | 486,184 |
| Նախկինում ճանաչված զեղչի ամորտիզացիա | - | 250,452 |
| Տոկոսային եկամուտ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և ժամկետային ավանդից | 42,798 | 127,060 |
| **Ընդամենը ֆինանսական եկամուտ** | **1,734,495** | **2,385,014** |

## Ֆինանսական ծախսեր

| հազ. դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Տոկոսային ծախս թողարկված պարտատոմսերի գծով | 2,605,547 | 120,287 |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով | 770,823 | 745,988 |
| Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստ. ներկա արժեքի զեղչի ամորտիզացիա | 171,203 | 175,853 |
| Վնաս բաժնային գործիքների գծով | 78,625 | 1,086 |
| Տոկոսային ծախս ոչ ընթացիկ ֆինանսական կրեդիտորական պարտքերի զեղչումից | - | 78,192 |
| ՕԱԻ համար ստացված կանխավճարների զեղչի ամորտիզացիա | 520,938 | - |
| Տոկոսային ծախս ստացված վարկերի գծով | - | 2,086,401 |
| **Ընդամենը ֆինանսական ծախսեր** | **4,147,136** | **3,207,807** |
| Հանած՝ կապիտալացված ֆինանսական ծախսերը | - | (614,793) |
| **Ընդամենը շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական ծախսեր** | **4,147,136** | **2,593,014** |

Ընկերությունը կապիտալացրել է փոխառության ծախսումները, որոնք առաջացել են շինարարությանն ուղղակիորեն վերագրելի ֆինանսավորման գծով 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում: 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում փոխառության ծախսումները չեն կապիտալացվել: 2024թ-ին կապիտալացման տոկոսադրույքը կազմել էր 18.73%:

# 30. Շահութահարկ

***Շահութահարկ.*** ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվել է համաձայն օրենսդրության, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ է եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա ժամանակաշրջան փոխանցվող հարկային վնասի և ակտիվների և պարտավորությունների հարկման բազաների և ֆինանսական հաշվետվություններում ներկայացման նպատակով որոշվող հաշվեկշռային արժեքների միջև առաջացող ժամանակավոր տարբերությունների նկատմամբ: Սկզբնական ճանաչման համար գործող բացառության համաձայն՝ հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում բիզնեսի միավորում և չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի և ո՛չ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկի մնացորդները չափվում են կիրառելով հարկի դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է, որ կկիրառեն այն ժամանակաշրջանում, երբ ժամանակավոր տարբերությունները կմարվեն կամ կօգտագործվի հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնասը:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնասի գծով այն չափով, որքանով հավանական է ժամանակավոր տարբերությունը կմարվի ապագայում և առկա կլինի բավարար հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և այդ հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող իրավաբանական անձից կամ տարբեր հարկվող իրավաբանական անձանցից և նրանք մտադիր են մնացորդները մարել զուտ հիմունքով:

***Հարկերի գծով անորոշ դիրքորոշումներ***. Ընկերության հարկերի գծով անորոշ դիրքորոշումները վերագնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվառվում են, երբ ղեկավարությունը գտնում է, որ ավելի քան հավանական է, որ դրանք կհանգեցնեն լրացուցիչ հարկերի գանձմանը, եթե այդ պարտավորությունները վիճարկվեն հարկային մարմինների կողմից: Գնահատումը հիմնված է հարկերի մասին այն օրենքների մեկնաբանության վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի վերաբերյալ հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի ղեկավարության լավագույն գնահատականը: Շահութահարկի գծով անորոշ դիրքորոշումների ճշգրտումները, բացառությամբ տոկոսների և տուգանքների, գրանցվում են շահութահարկի գծով ծախսի կազմում: Տոկոսների և տուգանքների հետ կապված շահութահարկի գծով անորոշ դիրքորոշումների ճշգրտումները գրանցվում են համապատասխանաբար ֆինանսական ծախսերի և այլ օգուտների/(կորուստների) կազմում՝ զուտ հիմունքով:

**(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ**

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալը.

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Հետաձգված հարկ | 537,594 | 378,951 |
| **Տարվա շահութահարկի գծով ծախս** | **537,594** | **378,951** |

**(բ) Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում**

| | **2025թ.** | | **2024թ.** | |
|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **%** | **հազ. դրամ** | **%** |
| Շահույթ/(վնաս) մինչև հարկումը շարունակվող գործառնություններից | 1,607,036 | 18% | 1,802,996 | 18% |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | 289,266 | | 324,539 | |
| Չհարկվող եկամուտ՝ հանած չնվազեցվող ծախսեր | 248,328 | 16% | 54,412 | 3% |
| **Տարվա շահութահարկի գծով ծախս** | **537,594** | **34%** | **378,951** | **21%** |

**(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի**

ՖՀՄՍ-ների և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվություններում ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց հարկման բազաների միջև: Այդ ժամանակավոր տարբերությունների փոփոխությունների հարկային հետևանքները 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ներկայացված են ստորև.

| **հազ. դրամ** | **1 հունվարի 2025թ.** | **(Ծախսագրված)/ կրեդիտագրված շահույթին կամ վնասին** | **31 դեկտեմբերի 2025թ.** |
|---|---|---|---|
| **Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 1,143,048 | (554,671) | 588,377 |
| Ոչ նյութական ակտիվներ | 190,052 | 35,308 | 225,360 |
| Ներդրումային գույք | (1,097,480) | - | (1,097,480) |
| Կանխավճարներ և պայմանագրի գծով ակտիվներ | (18,699) | 142,248 | 123,549 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (1,065,850) | (711,765) | (1,777,615) |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,063,791 | 396,158 | 1,459,949 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 524,813 | 19,179 | 543,992 |
| Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստ | 313,211 | 8,702 | 321,913 |
| Ստացված կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ | 6,160 | 32,469 | 38,629 |
| Կրեդիտորական պարտքեր | (13,556) | 206,497 | 192,941 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 160,876 | 2,289 | 163,165 |
| Թողարկված պարտատոմսեր | (127,601) | 26,868 | (100,733) |
| Հարկային վնաս | 281,652 | (67,852) | 213,800 |
| Ներդրումներ համատեղ ձեռնարկումներում | - | 14,153 | 14,153 |
| Տրամադրված փոխառություններ | - | (85,402) | (85,402) |
| Այլ պահուստներ | - | (1,775) | (1,775) |
| **Զուտ հետաձգված հարկային ակտիվ** | **1,360,417** | **(537,594)** | **822,823** |

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա հարկային վնասները կարող են օգտագործվել մինչև 2029թ.:

Ժամանակավոր տարբերությունների փոփոխությունների հարկային հետևանքները 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ներկայացված են ստորև.

| **հազ. դրամ** | **1 հունվարի 2024թ.** | **(Ծախսագրված)/ կրեդիտագրված շահույթին կամ վնասին** | **31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---|---|---|
| ***Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքներ*** | | | |
| Հիմնական միջոցներ | 1,566,969 | (423,921) | 1,143,048 |
| Ոչ նյութական ակտիվներ | 52,763 | 137,289 | 190,052 |
| Ներդրումային գույք | (1,116,921) | 19,441 | (1,097,480) |
| Կանխավճարներ և պայմանագրի գծով ակտիվներ | (16,181) | (2,518) | (18,699) |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (1,000,111) | (65,738) | (1,065,850) |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,138,698 | (74,908) | 1,063,791 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 669,323 | (144,510) | 524,813 |
| Ակտիվների ապագործարկման պարտականությունների գծով պահուստ | 281,461 | 31,750 | 313,211 |
| Ստացված կանխավճարներ և պայմանագրի գծով պարտավորություններ | 7,870 | (1,710) | 6,160 |
| Կրեդիտորական պարտքեր | (1,096) | (12,461) | (13,556) |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 141,503 | 19,374 | 160,876 |
| Թողարկված պարտատոմսեր | - | (127,601) | (127,601) |
| Հարկային վնաս | 15,090 | 266,562 | 281,652 |
| **Զուտ հետաձգված հարկային ակտիվ** | **1,739,368** | **(378,951)** | **1,360,417** |

## 31. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Ընկերության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին՝ բացառությամբ հետգնված բաժնետոմսերի:

Ընկերությունը չունի նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսեր, հետևաբար, մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը հավասար է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթին:

Շարունակվող գործառնություններից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը հաշվարկվում է հետևյալ կերպ.

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Տարվա շահույթ | 1,069,442 | 1,424,045 |
| Սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող տարվա շահույթ | 1,069,442 | 1,424,045 |
| Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (Ծնթգ. 16) | 228,377,090 | 228,377,090 |
| **Մեկ սովորական բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (արտահայտված ՀՀ դրամով՝ մեկ բաժնետոմսի դիմաց)** | **4.68** | **6.24** |

## 32. Հանձնառություններ և պայմանական դեպքեր

***Դատական վարույթներ***. Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Ղեկավարությունը, հիմնվելով սեփական գնահատումների վրա, գտնում է, որ դրանք չեն հանգեցնի էական կորուստների, որոնք կգերազանցեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված պահուստների գումարը:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունը և վերջնական սեփականատերերը ներգրավված են եղել դատական վարույթում նախկինում իրենց պատկանող ընկերության հետ՝ «Վեոն Արմենիա»-ի (Ընկերության նախկին անվանումը) բաժնետոմսերի ձեռքբերման հետ կապված: Պահուստ չի ձևավորվել, քանի որ Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ որևէ էական վնասի և ռիսկի առաջացումը քիչ հավանական է: Ցանկացած դեպքում դատական վարույթը ֆինանսական ազդեցություն չի ունենա Ընկերության վրա:

***Պայմանական հարկային պարտավորություններ***. Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրության որոշ դրույթներ Ընկերության գործարքների և գործունեության նկատմամբ կիրառելիս ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հետևաբար, հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ դիրքորոշում օրենսդրության մեկնաբանության և գնահատման հարցում, որի արդյունքում կարող է փոխվել նախկինում հարկային մարմինների կողմից չվիճարկված գործարքների և հարկային հաշվառման մեկնաբանությունը: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման վերաբերյալ որոշման կայացման տարվան նախորդող երեք օրացուցային տարիները:

Ղեկավարության գնահատմամբ Ընկերությունը չունի հնարավոր հարկային պարտավորություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

***Կապիտալ ծախսումների գծով հանձնառություններ.*** 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կապիտալ ծախսումների պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռքբերման գծով՝ 2,813,831 հազար դրամի չափով (2024թ-ին՝ 3,716,226 հազար դրամ): Ընկերությունն արդեն հատկացրել է անհրաժեշտ ռեսուրսներ այդ պարտավորությունների կատարման համար: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ապագա զուտ եկամուտը և ֆինանսավորումը բավարար կլինեն այդ և համանման այլ պարտավորությունները կատարելու համար:

***Բնապահպանությանը վերաբերող հարցեր***. Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական կանոնակարգերի կիրարկումը զարգացման փուլում է, և պետական մարմինների մոտեցումը դրանց կիրառման նկատմամբ շարունակաբար վերանայվում է: Ընկերությունը պարբերաբար գնահատում է բնապահպանական կանոնակարգերով նախատեսված իր պարտավորությունները: Պարտավորությունները ճանաչվում են անմիջապես որոշակիացման պահին: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ գործող կանոնակարգերի, քաղաքացիական դատավարական համակարգի կամ օրենսդրության փոփոխությունների արդյունքում, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Գործող օրենսդրության շրջանակում ձևավորված կիրարկման միջավայրում ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չունի շրջակա միջավայրին հասցված վնասի գծով էական պարտավորություններ:

## 33. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը ներառում է շուկայական ռիսկը (որը ներառում է արժութային, տոկոսադրույքային և այլ գնային ռիսկերը), պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկերի կառավարման առաջնային նպատակն է սահմանել ռիսկերի սահմանաչափեր և ապահովել այդ ռիսկերին ենթարկվածությունը սահմանված սահմանաչափերում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման նպատակն է ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ կիրառումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Տնօրենների խորհուրդը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման և վերահսկման համար:

***Պարտքային ռիսկ.*** Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի ապառիկ պայմաններով վաճառքի և ֆինանսական ակտիվներ առաջացնող՝ պայմանագրային կողմերի հետ իրականացված այլ գործարքների հետ կապված:

Ստորև աղյուսակում ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ըստ դասակարգերի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր (Ծնթզ. 13) | 9,290,610 | 9,652,027 |
| Ժամկետային ավանդ | - | 673,914 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծնթզ.15) | 9,134,776 | 7,871,040 |
| **Ընդամենը ենթարկվածությունը պարտքային ռիսկին՝ ըստ հաշվապահական հաշվեկշռի** | **18,425,386** | **18,196,981** |

***Պարտքային ռիսկի կառավարում.*** Պարտքային ռիսկն ամենամեծ ռիսկն է Ընկերության գործունեության համար, ուստի ղեկավարությունը խստիվ վերահսկում է Ընկերության ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ գործընթաց է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի ընթացքից: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է պարտազանցման տեղի ունենալու հավանականության, կորուստների համապատասխան գործակիցների և պայմանագրային կողմերի միջև պարտազանցումների փոխկապակցվածության հետագա գնահատում:

***Սահմանաչափեր***. Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանելով սահմանաչափ մեկ պայմանագրային կողմի կամ պայմանագրային կողմերի խմբի գծով ստանձնած ռիսկի չափի համար, ինչպես նաև աշխարհագրական և արդյունաբերական սեգմենտների հետ կապված: Պարտքային ռիսկի սահմանաչափերը պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը վերանայում է չմարված առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծությունը և ձեռնարկում է միջոցներ ժամկետանց մնացորդների հավաքագրման ուղղությամբ: Ուստի, ղեկավարությունը նպատակահարմար է համարում տրամադրել մարման ժամկետների վերաբերյալ և այլ տեղեկատվություն պարտքային ռիսկի համար, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 13-ում:

***Շուկայական ռիսկ***. Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են՝ (ա) արտարժույթի, (բ) տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային գործիքների բաց դիրքերի հետ կապված, որոնք բոլորը ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխությունների ազդեցության: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի չափի սահմանաչափ, որն Ընկերությունը կարող է ընդունել և որը վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այդ մոտեցման կիրառումը չի կանխում այդ սահմանաչափից դուրս վնասների առաջացումը շուկայի ավելի նշանակալի փոփոխությունների դեպքում:

Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմնվելով մեկ գործոնի փոփոխության վրա՝ մնացած բոլոր գործոնների հաստատուն լինելու պայմանով: Գործնականում դա քիչ հավանական է, և որոշ գործոնների փոփոխություններ կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքների փոփոխությունները:

***Արժութային ռիսկ.*** Ընկերությունը ենթարկվում է արժութային ռիսկին իր ֆունկցիոնալ արժույթի և այն արժույթի միջև անհամապատասխանության չափով, որով արտահայտված են վաճառքները, գնումները և փոխառությունները: Այդ գործարքները հիմնականում արտահայտված են եվրոյով և ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների հետ կապված Ընկերության քաղաքականությունն է ապահովել, որպեսզի իր զուտ ենթարկվածությունն արտարժութային ռիսկին պահպանվի ընդունելի մակարդակում՝ անհրաժեշտության դեպքում գնելով կամ վաճառելով արտարժույթ սփոթ փոխարժեքներով կարճաժամկետ անհամապատասխանությունները կարգավորելու նպատակով:

| **հազ. դրամ** | **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | | **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Դրամային ֆինանսա-կան ակտիվներ** | **Դրամային ֆինանսական պարտավո-րություններ** | **Զուտ հաշվեկշռային դիրք** | **Դրամային ֆինանսա-կան ակտիվներ** | **Դրամային ֆինանսական պարտավո-րություններ** | **Զուտ հաշվեկշռային դիրք** |
| ԱՄՆ դոլար | 18,397,750 | (28,434,280) | (10,036,529) | 27,262,920 | (29,022,008) | (1,759,088) |
| Եվրո | 1,868,759 | (5,641,473) | (3,772,714) | 1,815,517 | (2,619,633) | (804,116) |
| Այլ | 393,997 | (261,848) | 132,149 | 330,035 | (334,175) | (4,140) |
| **Ընդամենը** | **20,660,507** | **(34,337,602)** | **(13,677,095)** | **29,408,472** | **(31,975,816)** | **(2,567,344)** |

Վերը նշված վերլուծությունը ներառում է միայն դրամային ակտիվները և պարտավորությունները: Ընկերությունը գտնում է, որ ոչ դրամային ակտիվները չեն առաջացնում էական արժութային ռիսկ:

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

| **ՀՀ դրամով** | **Միջին փոխարժեք** | | **Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ** | |
|---|---|---|---|---|
| | **2025թ.** | **2024թ.** | **2025թ.** | **2024թ.** |
| 1 ԱՄՆ դոլար | 386.82 | 392.66 | 381.36 | 396.56 |
| 1 եվրո | 437.42 | 424.88 | 449.01 | 413.89 |

Ստորև ներկայացված է մինչև հարկումը շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը Ընկերության ֆունկցիոնալ արժույթի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ, պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

| **հազ. դրամ** | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| ԱՄՆ դոլարի արժևորում 10%-ով (2024թ-ին՝ արժևորում 10%-ով) | (1,003,653) | (175,909) |
| ԱՄՆ դոլարի արժեզրկում 10%-ով (2024թ-ին՝ արժեզրկում 10%-ով) | 1,003,653 | 175,909 |
| Եվրոյի արժևորում 10%-ով (2024թ-ին՝ արժևորում 10%-ով) | (377,271) | (80,412) |
| Եվրոյի արժեզրկում 10%-ով (2024թ-ին՝ արժեզրկում 10%-ով) | 377,271 | 80,412 |

**Տոկոսադրույքային ռիսկ**. տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրամադրված փոխառությունների և թողարկված պարտատոմսերի վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխական տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար ֆիքսված, թե փոփոխական տոկոսադրույքն ավելի նպատակահարմար կլինի Ընկերության համար մինչև մարման ժամկետն ընկած ակնկալվող ժամանակահատվածում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

| **հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2025թ.** | **31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---:|---:|
| **Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական ակտիվներ | 25,614,167 | 28,111,069 |
| Ֆինանսական պարտավորություններ | 36,401,287 | 35,062,000 |
| **Զուտ տոկոսադրույքի զգայնության ճեղքվածքը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **(10,787,120)** | **(6,950,931)** |

Ընկերությունը չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող: Այդ իսկ պատճառով, բացառությամբ տրամադրված փոխառությունների ազդեցության, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա: Տրամադրված փոխառությունների իրական արժեքի զգայնությունը ներկայացված է Ծանոթագրություն 4-ում:

***Իրացվելիության ռիսկ.*** իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս: Ընկերությունը ենթարկվում է առկա դրամական միջոցների ամենօրյա պահանջների ռիսկին: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության Ֆինանսական բաժնի կողմից: Ղեկավարությունն իրականացնում է դրամական հոսքերի ամսական շարժի կանխատեսումների մոնիտորինգ: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու: Ընկերության իրացվելիության պորտֆելը ներառում է դրամական միջոցները և դրանց համարժեքները (Ծանոթագրություն 15):

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **հազ. դրամ** | **Մինչև 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **12 ամսից 5 տարի** | **Ավելի քան 5 տարի** | **Ընդամենը** |
|---|---:|---:|---:|---:|---:|
| Թողարկված պարտատոմսեր | 602,810 | 1,808,431 | 35,319,584 | - | 37,730,825 |
| Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծնթգ. 21) | 10,974,002 | 2,261,709 | 273,157 | - | 13,508,868 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 759,925 | 2,974,715 | 5,059,121 | 5,559,544 | 14,393,305 |
| **Ընդամենը ապագա վճարումներ, ներառյալ մայր գումարի և տոկոսների ապագա վճարումները** | **12,336,737** | **7,044,855** | **40,651,862** | **5,559,544** | **65,632,998** |

Վերը աղյուսակում ներկայացված են ֆինանսական պարտավորություններն ըստ պայմանագրային մնացած մարման ժամկետների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Մարման ժամկետների վերլուծության աղյուսակում բացահայտված գումարներն իրենցից ներկայացնում են պայմանագրային չզեղչված դրամական հոսքերը, ներառյալ վարձակալության գծով համախառն պարտավորությունները (նախքան ապագա ֆինանսական ծախսերի նվազեցումը), և ֆինանսական երաշխավորությունները: Չզեղչված դրամական հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված գումարներից, քանի որ այդ գումարները հիմնված են զեղչված դրամական հոսքերի վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **հազ. դրամ** | **Մինչև 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **12 ամսից 5 տարի** | **Ավելի քան 5 տարի** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|
| Թողարկված պարտատոմսեր | 612,448 | 1,887,344 | 34,012,971 | - | 41,492,763 |
| Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծնթգ. 21) | 10,095,062 | 450,315 | 3,012,689 | - | 13,558,066 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 240,935 | 2,233,645 | 4,445,467 | 1,554,994 | 8,475,041 |
| **Ընդամենը ապագա վճարումներ, ներառյալ մայր գումարի և տոկոսների ապագա վճարումները** | **10,948,445** | **4,551,304** | **46,471,127** | **1,554,994** | **63,525,870** |

Երբ վճարման ենթակա գումարը ֆիքսված չէ, բացահայտվող գումարը որոշվում է հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վրա: Արտարժույթով վճարումները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող սփոթ փոխարժեքը:

## 34. Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման Ընկերության նպատակն է ապահովել անընդհատության հիմունքով գործելու կարողությունը՝ բաժնետերերի համար եկամտաբերություն և այլ շահառուների համար օգուտներ ապահովելու նպատակով, ինչպես նաև պահպանելու համար կապիտալի օպտիմալ կառուցվածքը՝ կապիտալի արժեքը նվազեցնելու նպատակով: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները պարտքը նվազեցնելու նպատակով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տնօրինվող կապիտալի չափը կազմել է 43,767,594 հազար դրամ (2024թ-ին՝ 42,698,152 հազար դրամ):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պահուստային կապիտալը ձևավորվում է բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով: Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության վնասները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, այն դեպքերում, երբ Ընկերության շահույթը և այլ միջոցները բավարար չեն դրա համար:

Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին կարգավորող մարմինների պահանջներ:

# 35. Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափումների վերլուծությունն իրականացվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների հետևյալ կերպ. (i) 1-ին մակարդակ՝ չափումներ նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) 2-րդ մակարդակ՝ գնահատման մեթոդներ ակտիվի կամ պարտավորության համար ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող) դիտելի ելակետային տվյալներով և (iii) 3-րդ մակարդակ՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ): Ղեկավարությունը կիրառում է դատողություններ ֆինանսական գործիքներն իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին դասակարգելիս: Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են նշանակալի ճշգրտում պահանջող դիտելի տվյալներ, իրական արժեքի չափումը վերագրվում է 3-րդ մակարդակ: Գնահատման ելակետային տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքի չափման՝ որպես մեկ ամբողջության համատեքստում:

### *(ա) Իրական արժեքի կրկնվող չափումներ*

Իրական արժեքի կրկնվող չափումներն այն չափումներն են, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Իրական արժեքի հիերարխիայի այն մակարդակները, որոնցում դասակարգվում են իրական արժեքի կրկնվող չափումները, հետևյալն են.

| **հազ. դրամ** | **2025թ.** | | **2024թ.** | |
|---|---|---|---|---|
| | **3-րդ մակարդակ** | **Ընդամենը** | **3-րդ մակարդակ** | **Ընդամենը** |
| **Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Ներդրումային գույք | 6,097,112 | 6,097,112 | 6,097,112 | 6,097,112 |
| Տրամադրված փոխառություններ | 16,568,547 | 16,568,547 | 19,629,859 | 19,629,859 |
| **Ընդամենը ակտիվների իրական արժեքի կրկնվող չափումներ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **22,665,659** | **22,665,659** | **25,726,971** | **25,726,971** |

Ստորև ներկայացված են գնահատման մեթոդը, 3-րդ մակարդակի իրական արժեքի չափումների համար օգտագործվող ելակետային տվյալները և այդ տվյալների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ զգայունությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| | **Իրական արժեք** | **Գնահատման մեթոդ** | **Օգտագործ-ված ելակետային տվյալներ** | **Ելակետային տվյալների տիրույթ (կշռված միջին)** | **Ողջամտորեն հնարավոր փոփոխու-թյուն** | **Իրական արժեքի չափման զգայունու-թյուն** |
|---|---|---|---|---|---|---|
| Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ | | | | | | |
| Ներդրումային գույք | 6,097,112 | Զեղչված դրամական հոսքեր | Կապիտա-լացման դրույք | 12.48% | 0.50%<br>-0.50% | (232,578)<br>251,999 |
| **Ընդամենը 3-րդ մակարդակի իրական արժեքի կրկնվող չափումներ** | **6,097,112** | | | | | |

Տրամադրված փոխառությունների համար գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունը ներկայացված է Ծանոթագրություն 4-ում: Վերը ներկայացված աղյուսակներում բացահայտվում է գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունն այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար, եթե ոչ դիտելի ելակետային տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը՝ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու նպատակով, նշանակալիորեն փոխի իրական արժեքը: Այդ նպատակով նշանակալիությունը գնահատվել է շահույթի կամ վնասի, ընդհանուր ակտիվների կամ ընդհանուր պարտավորությունների տեսանկյունից, կամ երբ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ընդհանուր սեփական կապիտալում: 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում 3-րդ մակարդակի իրական արժեքի կրկնվող չափումների գնահատման մեթոդներում փոփոխություններ տեղի չեն ունեցել (2024թ-ին՝ փոփոխություններ տեղի չեն ունեցել):

### *(բ) Իրական արժեքով չչափվող ակտիվներ և պարտավորություններ, որոնց համար բացահայտվում է իրական արժեքը*

Իրական արժեքների վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների և իրական արժեքով չչափվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ներկայացված են ստորև:

| | **31 դեկտեմբերի 2025թ.** | | | **31 դեկտեմբերի 2024թ.** | | |
|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2-րդ մակարդակի իրական արժեք** | **3-րդ մակարդակի իրական արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** | **2-րդ մակարդակի իրական արժեք** | **3-րդ մակարդակի իրական արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** |
| **Ակտիվներ** | | | | | | |
| ***Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*** | | | | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | - | 9,290,610 | 9,290,610 | - | 9,652,024 | 9,652,024 |
| Ժամկետային ավանդներ | - | - | - | 673,914 | - | 673,914 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 9,134,776 | - | 9,134,776 | 7,905,458 | - | 7,905,458 |
| **Ընդամենը ակտիվներ** | **9,134,776** | **9,290,610** | **18,425,386** | **8,579,372** | **9,652,024** | **18,231,396** |

| | **31 դեկտեմբերի 2025թ.** | | | **31 դեկտեմբերի 2024թ.** | | |
|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2-րդ մակարդակի իրական արժեք** | **3-րդ մակարդակի իրական արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** | **2-րդ մակարդակի իրական արժեք** | **3-րդ մակարդակի իրական արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** |
| **Պարտավորություններ** | | | | | | |
| ***Փոխառություններ*** | | | | | | |
| Թողարկված պարտատոմսեր | - | 29,726,313 | 28,307,450 | - | 29,152,052 | 29,152,052 |
| ***Այլ ֆինանսական պարտավորություններ*** | | | | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | - | 13,215,279 | 13,215,279 | - | 10,675,835 | 10,675,835 |
| Այլ երկարաժամկետ ֆինանսական պարտավորություններ | - | 273,157 | 273,157 | - | 2,225,869 | 2,225,869 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **-** | **43,214,749** | **41,795,886** | **-** | **42,053,756** | **42,053,756** |

Իրական արժեքի հիերարխիայի 2-րդ և 3-րդ մակարդակներում իրական արժեքները գնահատվել են օգտագործելով զեղչված դրամական հոսքերի գնահատման մեթոդը: Չգնանշվող՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է գնահատված ապագա դրամական հոսքերի հիման վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն՝ զեղչված համանման պարտքային ռիսկեր և մնացած մարման ժամկետներ ունեցող նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով:

## 36. Կապակցված կողմերի հետ գործարքներ և մնացորդներ

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական և վերջնական մայր ընկերությունն է «Թիմ» ՓԲԸ-ն և Ընկերության վերջնական հսկողությունն իրականացնում են Հայկ և Ալեքսանդր Եսայան եղբայրները:

Ընկերության վերջնական մայր ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

Կողմերը համարվում են կապակցված, եթե գտնվում են համատեղ հսկողության ներքո կամ եթե կողմերից մեկն ունի մյուս կողմի նկատմամբ հսկողություն իրականացնելու կարողություն կամ կարող է իրականացնել նշանակալի ազդեցություն կամ համատեղ հսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները հետևյալն են.

| **հազ. դրամ** | **Անմիջական մայր ընկերություն** | **Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ** |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Տրամադրված փոխառություններ | 16,574,780 | - |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, բացառությամբ կանխավճարների | 3,419,854 | 207,307 |
| Կանխավճարներ ընթացիկ ակտիվների և ձեռք բերված ծառայությունների համար | 1,136,578 | 19,118 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար | - | 12,336 |
| **Պարտավորություններ** | | |
| Ստացված կանխավճարներ | - | 897,330 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | - | 1,280,533 |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները հետևյալն են.

| **հազ. դրամ** | **Անմիջական մայր ընկերություն** | **Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ** |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Տրամադրված փոխառություններ | 20,008,859 | - |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, բացառությամբ կանխավճարների | 3,408,644 | 503,742 |
| Կանխավճարներ ընթացիկ ակտիվների և ձեռք բերված ծառայությունների համար | 1,454,129 | 893,156 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար | - | 864,143 |
| **Պարտավորություններ** | | |
| Ստացված կանխավճարներ | - | 381,559 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | - | 909,841 |

Կապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, ինչպես նաև այլ գործարքները 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

| **հազ. դրամ** | **Անմիջական մայր ընկերություն** | **Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ** |
|---|---|---|
| **Ծախսեր** | | |
| Ծառայությունների ձեռքբերում | 950,250 | 1,349,526 |
| Ակտիվների ձեռքբերում | 545 | 2,102,500 |
| Կառավարման վճարներ | 758,333 | - |
| **Եկամուտ** | | |
| Մատուցված ծառայություններ և վաճառված ապրանքներ | 3,636 | 128,678 |
| Օգուտ հիմնական միջոցների և այլ պաշարների վաճառքից | 1,931 | 1,282,909 |
| Այլ եկամուտ | - | 3,386 |
| Տոկոսային եկամուտ | 1,542,468 | - |

Կապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, ինչպես նաև այլ գործարքները 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

| **հազ. դրամ** | **Անմիջական մայր ընկերություն** | **Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ** |
|---|---|---|
| **Ծախսեր** | | |
| Ծառայությունների ձեռքբերում | 951,450 | 499,680 |
| Ակտիվների ձեռքբերում | 5,163 | 1,401,006 |
| Կառավարման վճարներ | 700,000 | - |
| **Եկամուտ** | | |
| Մատուցված ծառայություններ և վաճառված ապրանքներ | 3,636 | 37,720 |
| Օգուտ հիմնական միջոցների և այլ պաշարների վաճառքից | 7,951 | 158,105 |
| Տոկոսային եկամուտ | 1,521,318 | - |

***Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցում***. առանցքային ղեկավար անձնակազմի անդամներն են Գլխավոր տնօրենը, Գլխավոր տնօրենի տեղակալը, Ֆինանսական տնօրենը, Գործառնական տնօրենը և Կոմերցիոն տնօրենը:

Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները ներկայացված են ստորև.

| **հազ. դրամ** | **2025թ.** | | **2024թ.** | |
|---|---|---|---|---|
| | **Գործարք** | **Մնացորդ** | **Գործարք** | **Մնացորդ** |
| Վարձատրություն | 556,441 | 71,520 | 542,068 | 37,006 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 20,115 | - | 31,261 | - |
| Օգուտ հիմնական միջոցների և այլ պաշարների վաճառքից | 175 | - | 1,227 | - |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, բացառությամբ կանխավճարների | - | 2,147 | - | 2,132 |